

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԱԿԱՆՆԵՐԻ
ՄԱՐՏԻԿԱՆ ԱԽՐԱԴՈՒԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ



ԴԵՆԵՐԱԼ-ՄԱՅՈՐ
ԱՄԲԱՇ
ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՀԱՅՈՒԹ-ՑՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՀՐԱՄԱՐԱԿԱՆՔ-ՑՈՒՆ




ՀԱՅՈՒ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ՊԱՍՄՈՒԹՅԱՆ ԻՆՍԻՏՈՒՏ

Պ. Ա. ԽԱՄԲԱԳԻՐ
ՀՕՎՀ. ՄԱՄԻԿՈՆՅԱՆ

Ակադեմիա Նայք ԱԺՄ ՀՀ
Ինստիտուտ Իстории

մ. կ. մարտիքան
Герой Советского Союза
Генерал-майор
Асканаз Карапетян
(На армянском языке)





մղա ու խոզմաքո՞ւ մջածու ոչ ճախշառ ամ
դաշ մաճզգ բոռա՞ւ բաժ ապնամա պղմաս
և ան առա իր մառաւաւ առարրու առ

Արարատյան ղաշտավայրում, Արաքսի ա-
փերից ոչ հեռու, նախկին Սուրմալուի գավա-
ռի էվջիլար գյուղումն է ծնվել Սովետական
Միության Հերոս, գեներալ-մայոր Ասքանազ
Կարապետյանը՝ 1899 թվին։ Նա ավելի երի-
տասարդ է, քան վկայում է փաստաթղթա-
յին այդ թիվը։ Վառվուն ռեոլուցիոներ երի-
տասարդին օր առաջ բոլշևիկների պարտիա-
յի մեջ ընդունելու միահամուռ ցանկու-
թյամբ՝ ղեկավար ընկերները նրա ծննդյան
թվականը՝ 1902 թվից համարեցին 1899 թի-
վը, դրանով իսկ վերացնելով տարիքային
արգելքը պարտիայի շարքերն ընդունելիս։

Հերոսի հայրը — Գևորգ բիծան — մի բարձ-
րահասակ, հաղթանդամ ու թխադեմ մարդ
էր, ընկերասեր, մարդասեր ու կատակա-
բան։ Մայրը — Սանդուխտը — փոքրահասակ,
նիհարակազմ, բարի մի կին։ Միջակ գյուղա-
ցիական ընտանիքի կենսապայմաններում

նա տարված էր տնային հոգսերով ու երեխաների խնամքով, իսկ Գևորգ բիձան շարքաշ գյուղացու աշխատանքով ապահովում էր իր օջախի ապրուստը: Որպես ընկերասեր մարդու, նրա համեստ սեղանից անպակաս էին դարդիման ընկերները, իսկ կարիքավոր, աղքատ համապյուղացիները միշտ արժանանում էին նրա կարեկից, սրտաբովս օժանդակությանն ու աջակցությանը:

Ասքանազը հորից ժառանգեց պարթև հասակը, հաղթ կազմն ու երկաթե առողջությունը, նրա մշտուրախ բնավորությունն ու գործարար հնարամտությունը, իսկ մորից՝ նրա համեստությունն ու բարի սիրտը:

Կարապետյանը մինչև օրս էլ հիշում է իր մանկության օրերին հոր հնարամիտ ու համարձակ մի քայլը: Նա ուսուցիոն շարժման համակիրներից մեկն էր և վայելում էր ընդհատակյա կազմակերպության վստահությունը: Մի անգամ ընդհատակի մարդիկ նրան հանձնարարել էին խիստ պատասխանատու մի գործ: Պետք էր դենք տեղափոխել:

Գևորգ բիծան այդ պատասխանառու
գործը գլուխ բերելու համար դիմել էր այս-
պիսի հնարամտության: Նա համոզել էր
դյուղի քահանային և գուժկան կանանց, որ
հարևան գյուղից պետք է տեղափոխել երկու
անձանոթ մարդկանց դիակ, որոնք հարա-
զատներ չունենալու պատճառով հասարա-
կական թաղման կարիք ունեն: Նրա փաս-
տարկումները սպառիշ կերպով համոզիշ
էին: Եվ Գևորգ բիծան քահանայի ու գուժ-
կան կանանց ուղեկցությամբ՝ հաջորդ օրը
սայլերի վրա բարձած երկու գագաղ է փո-
խադրում հարևան գյուղից, կազմակերպում
դրանց թաղումը: Ընդհատակյա կազմակեր-
պության առաջադրանքը կատարված էր:
Այս դեպքը խոր տպավորություն է թողնում
մանուկ Ասքանազի վրա:

Ասքանազը նախնական կրթություն է
ստանում էվջիլարի ծխական դպրոցում:
Հարազատ մոր մահվանից հետո, խորթ մոր
խնամքին մնացած Ասքանազը, հոր անդրա-
նիկը, չի համակերպվում տնական նոր, դա-
ժան պայմաններին: Նա եղբայրական ջերմ

ու անկաշառ սիրով սիրում էր իր կրտսեր եղբորը Վարդգեսին և քույրերին՝ Արզուքանին ու Սափարին։ Եվ մի օր մոր կողմից Վարդգեսին ծեծելը բավական եղավ, որպեսզի եղբայրական ինքնասիրությունն ու արժանապատվությունը վիրավորված պատանի Ասքանաղը ծառանար խորթ մոր դեմ և, ջարդելով խնոցին, հեռանար հայրենական տնից։ Այսպես էր արտահայտվել ազատասեր, անկաշկանդ պատանու ըմբուտացումը սեփական օջախում ստեղծված դաժան կյանքի դեմ։

Այս դեպքն էլ հենց բեկումնային մոմենտ հանդիսացավ Ասքանաղի կյանքում։ 1916 թվին լքելով հարազատ գյուղն ու հայրենական տունը, նա Հյուսիսային Կովկաս գյուղ՝ բախտ որոնելու։ Այնտեղ, Գեորգիևսկում, նա սկսեց աշխատել մի վաճառականի մոտ որպես հանձնակատար։ Այնուհետև 1917 թվին նա անցավ Գրոզնի, ուր նավթարդյունաբերական վարչությունում աշխատում էր որպես ցրիչ մինչև 1918 թիվը։

Այս ժամանակ դաշնակների տիրապե-

տության մղձավանջային օրերին տիրող սովոր ու համաճարակի զոհ են գնում Ասքանազի քույրերը, եղբայրը և հայրը։ Դիլիջան փոխադրված Ասքանազը ճգնում էր իր ֆիզիկական գոյությունը պահպանել սրպես փայտահատ բանվոր աշխատելով Փայտամթերման Վարչությունում։ Բայց չնշին աշխատավարձը չէր բավականացնում ապրուստի նույնիսկ տարրական կարիքներին։ Քաղցից շմեռնելու համար Ասքանազն իր վերջին զույգ տրեխներն էր մաշում անտառներում՝ վայրի զկեռ և այլ պտուղներ հավաքելով։

Այսպես անցավ մինչև 1920 թվի մարտը, երբ դաշնակների հայտարարած մոբիլիզացիայի հետևանքով Ասքանազն լնկավ Սարիղամիշ՝ ծառայելու գնդապետ։ Միրիմանովի Հայկական 4-րդ գնդում։

Այստեղ նորակոշիկներին զինվորական համագեստ չհագցրին։ Նրանք ծառայում էին՝ մնալով սեփական ցնցոտիների ու մաշված տրեխների մեջ։ Այսպիսի խղճալի տեսքուներ օտարերկրյա իմպերիալիստներին

ծախված դաշնակ ավանտյուրիստների «բանակը»:

Ասքանազին վիճակվեց որպես սևագործ աշխատել գնդի փոռում: Գնդի փոխ պետը Ասքանազի համագյուղացի Համբարձում իսրայելյանն էր, բոլշևիկյան ընդհատակյա այն կազմակերպության ակտիվ անդամներից մեկը, որը դեկավարում էր Լիպարիտ Մխչյանը:

Իսրայելյանը երիտասարդ Ասքանազի մեջ շուտով տեսնում է համարձակ ու վճռական մարդուն և աստիճանաբար ներգրավում նրան ընդհատակյա կազմակերպության մեջ: Ասքանազը համակվում է բոլշևիկյան ուսուցիոն գաղափարներով, դառնում այդ գաղափարների եռանդուն տարածողը: Նրա մեջ օրըստօրե ավելի ու ավելի էր ամրանում ու խորանում համոզմունքն այն մասին, որ միայն դաշնակների ատելի տիրապետության տապալումը, սովետական իշխանության հաստատումը Հայաստանում՝ հայ ժողովրդին կազմակեն ֆիզիկական բնաջնջումից, նրան կտան հաց, ազատություն ու խաղաղություն:

Հայրենասեր երիտասարդի սրտում բորբոքվում էր կիզիչ վրեժն ու ատելությունը ժողովրդի այդ թշնամիների դեմ, օտարերկրյա իմպերիալիստների, առաջին հերթին գերմանական դիշատիչ իմպերիալիստների դեմ, որոնք հենված իրենց հայ գործակալների ազգադավ քաղաքականությանը, ստույգ կործանման եզրին էին հասցրել մեր ժողովրդին։ Զէ՞ որ նրանց պատճառով էր, որ Ասքանազն էլ ուրիշ շատ հազարների հետ միասին, զրկվել էր հարազատներից՝ հորից, քույրերից ու եղբորից։ Եվ նա իր վրեժի հրայրքը կարծես քիչ մեղմացնում էր, երբ ակտիվորեն ցրում էր ընդհատակյա կազմակերպության թուցիկները, արհամարհելով հրամանատարության սպառնալիքներն ու մահու վտանգը։

Դնդի դաշնակ-շովինիստական հրամանատարության համար այդ ամենն ստեղծում էին լրացուցիչ դժվարություններ՝ իրենց ազգակավ քաղաքականության իրականացման համար։ Ռևոլուցիոն ամեն մի ելութ ար-

գելվում էր և Հետապնդվում՝ ամենադաժան
սպառնալիքներով:

Մի օր, թուցիկներ ցրելիս, Ասքանազին
ձերբակալում են: Պորուշիկ Սարատնիկովը
հրամայում է որպես պատիժ հիտուն ուղար
տալ «խռովարարական» թուցիկներ ցրողին
ու բանտարկել: Բանտային տանջանքները
դաշնակներին չեն օգնում: Ասքանազից որևէ
գաղտնիք իմանալու խնդրում: Նա մնում է
անդրդվելի և աննկուն, հավատարիմ՝ ժո-
ղովրդին ծառայելու իր իդեալին, արիու-
թյամբ պահպանելով ընդհատակյա կազմա-
կերպության գաղտնիքը: Բանտից նա ա-
զատվում է ընդհատակյա կազմակերպու-
թյան անդամ կապիտան Հակոբյանի միջա-
մտությամբ:

Ասքանազի բանտարկությունը, կրած
բանտային տանջանքները, մի տեսակ մար-
տական մկրտություն հանդիսացան նրա հա-
մար և 1920 թվի Մայիսյան տպատամբու-
թյան նախօրյակին, ապրիլ ամսին, նա ըն-
դունվեց բոլշևիկների պարտիայի շարքերը:
Լիպարիտ Միշյանի, բոլորից սիրված կոմի-

նարի ստորագրությամբ ստացած վկայականը հպարտությամբ համակեցին ու եռանդի նոր հորձանք ներշնչեցին երիտասարդ ու ուղղուցիոներին, որն օրեց-օր լցվում էր սեփական կյանքի գնով ժողովրդին կործանումից փրկելու անզուսպ ձգտումով։ Եվ Մայիսյան ապստամբության կրակոտ օրերին վառվուն ուղղուցիոներ Ասքանազը, ակտիվ մասնակցություն է ունենում, որպես շարքային կովելով Մայիսյան ապստամբության հերոս, կապիտան Լիալարիտ Մխչյանի գնդի շարքերում։

Ապստամբների դեմ դաշնակները կանոնավոր զորք են նետում Ղարսի կողմից և շրջապատում նրանց։ Ծանր դրություն ըստեղծվեց ապստամբության ղեկավարների՝ Մխչյանի, Զմշկյանի, Արփիարի, Բերբերյանի և մյուսների ձերբակալությամբ։ Առջանազը հարկադրված վախուստ տվեց դաշնակների հետապնդումից և հինգ ընկերների հետ միասին նա Կաղզվանի վրայով հասակ մինչև Արփաշայի ափերը։ Այստեղ ընկերներին մյուս ափն է անցկացնում մի ծերունի

նավագրաբ՝ Հին մի շինել ստանալով որպես
վարձատրություն:

Այսպես Ասքանազը լենինականի դեպո-
յի նախկին բանվոր Համբ. Գասպարյանի,
Վարդպես Հովհաննիսյանի և մյուսների հետ
միասին, Սպիտակի վրայով հետիւտն հա-
նում է Աև Քար (Իջևան) և այնտեղից անց-
նում Աղբքեցան:

.. 1920 թվի Հուլիս-օգոստոսին, նրանք միա-
նում են կարմիր զորքերի 11-րդ բանակի ։
Հարձակվող զորամասներին; Նրանց ընդու-
նում է հետախուզիչ ջոկատի հրամանատար Գլադատովը:

Ասքանազն այժմ կարմիր զորքերի հաղ-
թական շարքերում Աղբքեցանն աղատագրե-
լով, շարժվում էր դեպի Հայաստան՝ վաղե-
մի ծանոթ ու հարազատ վայրերով: Նա կա-
տարում էր հետախուզական բարդ ու պա-
տասխանատու առաջադրանքներ, իր ուսու-
լուցիոն ավյունին ու անձնվեր հայրենասի-
ռությանը զուգորդելով տեղանքի գիտակու-
թյունը:

Աշնանային մի ցրտաշունչ օր է, Հետա-

խուզիչ ջոկատը կանգնած է Իջևանի մոտ
անտառում։ Ասքանազը նոր է վերադարձել
թիկունքային խոր հետախուզությունից։ Հե-
տախուզության արդյունքների մասին Ասքա-
նազի զեկուցն ընդունում է երկար ու սե-
միրուքով, հաղթանդամ ու ամրակազմ մի
մարդ։ Նրա խորաթափանց ու ազդու հա-
յացքն արտահայտում է և՛ զինվորական
խստապահանջություն, և՛ իր զավակների
վարքից գոհունակ հոր գորովանք ու բավա-
կանություն։ Դա Աթարբեկյանն էր, Հայա-
տանի Ռազմառենոլուցիոն կոմիտեի նա-
խագահը, որին անշափ սիրում էին բո-
լորը։

Փետրվարյան ավանտյուրան Կարապե-
տյանը դիմավորում է արդեն որպես քաղ-
մարտիկ, Վաղպատի Հայկական Հրաժարկ
բրիգադայի 4-րդ գնդում, ուր ուղարկվել էր
Մխչյանի կարգադրությամբ։ 1920 թվի
դեկտեմբերին, չնայած իր տարիքի անհա-
մապատասխանությանը, ընդհատակում է
ժողովրդի թշնամիների դեմ մղված զինված
մարտերի բռնվում եփված ու փորձված Աս-

քանազն արդեն ընդունվել էր բոլշևիկյան
պարտիայի շարքերը:

1921 թվի փետրվարի 18-ից հետո 4-րդ
գումար նահանջելով գնում է դեպի Երևան:
Ասքանազն այդ ժամանակ դառնում է գրն-
դացրային դասակի հրամանատար: Գումար
դասավորվում է Ղամարլուում, այնուհետև՝
Դավալուում և Կարմիր Բանակի հիմնական
զորամասերից կտրված մի քանի այլ զորա-
մասերի հետ միասին, կիսաշրջապատման
օղակում քառասուն և հինգ օր անընդհատ
անհավասար մարտեր է մղում դաշնակ բան-
դաների դեմ: Այս մարտերի ժամանակ է
վիրավորվում գնդի լեգենդար կոմիսար, քա-
ղաքացիական պատերազմի հերոս Լիպարիտ
Մխչյանը և ապա՝ վախճանվում:

Այդ կրիտիկական օրերին Կարապետյա-
նի գնդացրային դասակը դիրք էր գրավել
Դավալուի շրջանում եղած մի բարձունքի
վրա և իր մահացու կրակով աջակցում էր
զորամասի մարտական պահպանությանը:
Այդպես էլ նրանք այդ դիրքերը պահեցին
իրենց ձեռքում մինչև Կարմիր Բանակի ղո-

իամասերի օպնության հասնելը։ Այնուհետև
գունդը միանալով Կարմիր Բանակի զորա-
մասերին, հաղթական առաջ է շարժվում
Դարալագյազն ու Զանդեզուրն ազատադրի-
լու դաշնակների տիրապետությունից։ Կար-
միր զորամասերի շարքում իր գնդացրային
դասակի գլուխն անցած Կարապետյանը
մտնում է Քեշիշչյանդ, Գորիս, ոչնչացնելով
նժդեհականների վերջին թափթփուկներին։

Կարապետյանն այսօր էլ իրեն հատուկ
աշխուժով է վերհիշում այդ օրերի հետա-
քրքրիր էպիզոդներից մեկը։

Նժդեհականներին հետապնդող մեր ա-
ռաջավոր փոքրաթիվ ջոկատը, որի կազմումն
էր ընթանում Կարապետյանի գնդացրային
դասակը, հանդիսպում է առաջինների ուժեղ
դիմադրությանը։ Կարապետյանը և ընկեր-
ները միտք են հղանում օգտագործել գյու-
ղում գտնվող ուղտերի երամակը։ Եվ ուղտե-
րի երամակը քշելով առաջավոր ջոկատի
առջեկից ու քողարկվելով նրանց ետևում,
նրանք հանկարծակի հայտնվում են նժդեհա-

կանների դիրքերում, խուճապի ու փախուստի մատնում նրանց:

Սովետական կարգերը վերջնականապես հաղթեցին նաև Հայաստանում։ Ժողովուրդն ու երկիրը սկսեցին բուժել իրենց վերքերը։ Սովետական իշխանության հաստատման համար մարտնչող զորամասերը սկսեցին վերակազմավորվել կանոնավոր զորքի։ Կարապետյանի գունդը վերակազմվեց Հայկական Հրածիգ 2-րդ գնդի, որի կազմում նա երեան վերադարձավ և ապա մինչև 1921 թվի վերջերը սահմանապահ ծառայություն էր կատարում Դավալուի շրջանում։ Այդպես անցավ և 1922 թիվը, որի յուրաքանչյուր օրը քաղաքական և հասարակական նոր աճ էր բերում երիտասարդ դինվորական Ասքանագ Կարապետյանին։ Նա ընտրվում է գընդի վերահսկիչ Հանձնաժողովի նախագահ, ապա և գնդային պարտհանձնաժողովի անդամ, դեկավարում է քաղխմբակ։

Կարապետյանը, սակայն, չի բավարարվում իր վրա կատարած համառ աշխատանքով, ինքնակը թությամբ ձեռք բերած գիտելիքնե-

իով։ Նա իր ուսպմա-քաղաքական, տեսական
պաշարը լրացնում ու կատարելագործում է
Մյասնիկյանի անվան Երևանի Հայկական
Ռազմական Միացյալ դպրոցում, այնտեղ
սովորելով 1923 թվից մինչև 1924 թվի ա-
շունը։ Դպրոցը «Գերազանց» ավարտելով, նա
արժանանում է «Գերազանցիկ» կրծքանշա-
նի։ Պատահական չէր, որ դպրոցի հրամա-
նատարությունը Ասքանազին պահում է
դպրոցում, որպես դաստու հրամանատար՝
գնդացրային գործի գծով։ Այսպես, մինչև
1927 թիվը Կարապետյանը Հայկական Ռազ-
մական Միացյալ դպրոցում գնդացրային
գործ է ուսուցանում բազմաթիվ երիտասարդ
կուրսանտների, Կարմիր Բանակի ապագա
իսկական հրամանատարների։

Ի դեպ, ուրախալի է հիշել, որ սովետա-
կան իշխանության հաստատման առաջին
օրերին Կարմիր Բանակի երիտասարդ զորա-
մասերի շարքերում իրենց կրծքով մեր Հայ-
րենիքն էին պաշտպանում Հայրենական
մեծ պատերազմի մասնակից հերոս շատ
սպաներ ու գեներալներ։ Այսպես քաղաքա-

ցիական պատերազմի կրակուտ օրերին Ասքանազի հետ ռազմական կյանքի դառնություններն ու ուրախություններն էին բաժանում նրա մարտական ընկերներ, պանծալի գնդապետ Միմոն Ջաքյանը, Սովետական Միության Հերոս գեներալ-մայոր Անդրանիկ Ղազարյանը, գեներալ-մայոր Սահակ Գասպարյանը, գեներալ-մայոր Փ. Գասպարյանը, գեներալ-մայոր Համո Բաբայանը և ուրիշները:

Կարապետյանի ուսուցած շատ կուրսանտներ Հայրենական պատերազմի ճակատներում իրենց պսակել են հերոսների անթառամ փառքով: Հրամանատար-գնդացրորդ, ռազմական գործի դասատու Ա. Կարապետյանի նախկին կուրսանտներից են գեներալ-մայոր Բագրատ Առուշանյանը, գեներալ-մայոր Նվեր Սաֆարյանը, Սովետական Միության Հերոսներ գնդապետ Գևորգ Միքայելյանը, գնդապետ Լևոն Դարբինյանը և շատ ուրիշներ:

1927 թվին Հայկական Ռազմական Մուսայալ դպրոցի լիկվիդացումից հետո, Կարա-

պետյանը նշանակվում է գնդացրային վայշտի հրամանատար Հայկական Յ-րդ գնդում, ուր ծառայում է մինչև 1928 թիվը։ Հմուտ գնդացրորդ և բանիմաց ու սիրված հրամանատարի վաշտը տեսչական ստուգումներին միշտ գրավում է առաջին տեղը կարգապահության, ուսուցման և հրաձգության արդյունքների գծով։

1928 թվին Կարապետյանին հանդիսաւմ ենք Թբիլիսիի Ռազմա-քաղաքական դպրոցում, ուր նա սովորում է մինչև 1929 թվի օգոստոսը։ Դպրոցը «գերազանց» գնահատականներով ավարտելով, նա հրամանատարության պահանջով այստեղ էլ մնում է մինչև 1930 թիվը, որպես դասընթացային հրամանատար, ապա դառնում է և վաշտի հրամանատարի օգնական։

Կարապետյանի այս շրջանի կուրսանուներից են շքանշանակիր գնդապետներ Մաթեվս Մադաթյանը, Երվ. Կարապետյանը, գվարդիայի փոխգնդապետ Բաբայանը, շքանշանակիր մայորներ Մուշեղ Աղաջանյանը, Ցոլակ Լիլոյանը և շատ ուրիշներ։ Ասքա-

նազի կուրսանտ-դասընկերներից են Սովետական Միության Հերոս, գեներալ-մայոր Անդրանիկ Ղազարյանը, գեներալ-մայոր Համո Բաբայանը, գնդապետ Արիստակես Բաբայանը, փոխգնդապետ Գարեգին Իլեկչյանը, շքանշանակիր մայոր Արամ Վարդանի Մանուկյանը:

1933 թվին Կարապետյանը տեղափոխվում է Կովկասյան Հրածդային առաջին դիվիզիայի 2-րդ գունդը, որպես գնդացրային վաշտի հրամանատար, ապա նույն գնդի դպրոցի պետ է նշանակվում 1934 թվին, ուր նա ծառայում է մինչև 1936 թիվը:

Կարապետյանի հրամանատարության տակ դպրոցը Կովկասյան Ռազմական օկրուգում առաջնություն է շահում ուղղմական ուսուցման մեջ: Միութենական տեսչական ստուգումների ժամանակ դպրոցն ու նրա հրամանատարության աշխատանքը արժանանում են բարձր գնահատականի, դրամական պարզեի: Բանակի հրամանատարությունը մի պատեփոն է նվիրում, իսկ դպրոցը նվաճում է դիվիզիայի փոխանցիկ դրո-

շը, և, որպես մարտական ուսուցման առաջավոր, ամբողջ երեք տարի անընդհատ այն պահում է իր ձեռքում։

Կարապետյանը համառորեն շարունակում է սովորել նաև ինքը։ 1936 թվի հունվարին մենք նրան հանդիպում ենք գնդի հրամանատարների „ԵՎԾՏԸԷԼ“ դասընթացներում։ 1937 թվի հուլիսին, այդ դասընթացներն ավարտելով «լավ» գնահատականով, սեպտեմբերին նա նշանակվում է Հայկական առաջին գնդի հրամանատար՝ կապիտանի կոչումով։ Աշնանային համաբանակային վարժություններին կապիտան Կարապետյանի գունդը մարտական բարձր վարժվածություն ցուցաբերելու և հաջող գործողությունների համար արժանանում է հրամանատառության շնորհակալությանը։ Կարապետյանն իրեն հատուկ հաստատակամությամբ ու եռանդով ձեռնամուխ է լինում գնդի անձնակազմի ռազմա-քաղաքական ուսուցման ծավալմանը, ձեռք բերված նվաճումների ամրապնդմանը։ Եվ 1938 թվի աշնան տեսչական ստուգումներին գունդն առաջին տեղն է

գրավում իր վարժվածությամբ և հրաձգացին պատրաստականությամբ։ Այս առթիվ ՍՍՌՄ Կենտրոնական Գործադիր Կոմիտեի որոշմամբ, գնդի հրամանատար կապիտան Կարապետյանը պարզեցատրվում է Կարմիր Աստղի մարտական առաջին շքանշանով։ Նա այդ շքանշանի առաջին սակավաթիվ կտվալերներից մեկն էր Հայաստանում։ 1938 թվի փետրվարի 18-ին Կարմիր Բանակի 20-ամյակի առթիվ նա պարզեցատրվում է «ԲԳԿԲ 20-ամյակը» հոբելյանական մեդալով։ Այս ժամանակ էլ Կարապետյանին շընորհվում է մայորի զինվորական հերթական կոչում։

Հայկական 1-ին գնդի հրամանատարությունը Կարապետյանը վարում է մինչև 1938 թվի օգոստոսը, երբ նշանակվում է 33-րդ հրաձգային դիվիզիայի 98-րդ գնդի հրամանատար՝ Նովոգիբկով քաղաքում։

98-րդ հրաձգային գնդի գլուխն անցած մայոր Կարապետյանը 1939 թվին մասնակցում է Արևմտյան Բելոռուսիայի ազատագրմանը, հասնում մինչև Բրեստ-Լիտովսկ

որտեղից վերադառնում է կրկին նովոզիբ-
կով:

1940 թվին մայոր Կարապետյանը 37-րդ
հրաձգային դիվիզիայի 20-րդ հրաձգային
գնդի հրամանատարն է և նորից աշքի է
ընկնում բանակային վարժություններում,
արժանանալով հրամանատարության բարձր
գնահատականին ու խրախուսանքին:

1941 թվին, Հայրենական պատերազմի
նախօրյակին,՝ մայոր Կարապետյանը նշա-
նակվում է մոտո-հրաձգային գնդի հրամա-
նատար: Դա նոր գործ էր, առավելապես
Կարապետյանի համար: Հարկավոր էր ճա-
րել մեքենաներ, անտառումն էլ ստեղծել
ուսուցման ու կյանքի պայմաններ՝ շարա-
յին և հրամանատարական կազմի համար:
Կարապետյանը եռանդուն կերպով ձեռնա-
մուխ եղավ բոլոր դժվարությունների հաղ-
թահարմանը և կարճ ժամանակամիջոցում
ստեղծեց մոտո-հրաձգային մի մարտունակ
զորամաս: Հենց այդ գնդի հրամանատարի
պոստումն էլ, Բրեստ-Լիտովսկից ոչ հեռու
գտնվող անտառում, Կարապետյանը դիմո-

վորեց գերմանա-ֆաշիստական հորդաների
արշավանքը Սովետական Երկրի վրա:

ԱՀԵՂ ՎՏԱՆԴԻ ՅՐԵՌԻՆ

1941 թվի հունիսի 21-ի լույս 22-ի գի-
շերը ժամը 4-ին գերմանա-ֆաշիստական
բանդիտների օդային անսպասելի հարձա-
կումը խախտեց սահմանային գոտում զա-
սավորված Կարապետյանի զորամասի հան-
գիստը: Գունդը տակտիկական վարժություն-
ների հանելու պատրաստվող Կարապետյա-
նը նոր որոշում ընդունեց:

Նախահարձակ թշնամին Բրեստ-Լիտո-
վսկի շրջանում ճեղքել էր մեր զորամասերի
պաշտպանությունը: Հարկավոր էր փակել
այդ ճեղքվածքը և Կարապետյանի գնդի
մարտական խնդիրն էր անհապաղ ելման
դիրքեր գրավել և մարտ ընդունել՝ հակա-
ռակորդի գերակշիռ ուժերի առաջխաղացու-
մը կասեցնելու նպատակով:

Չնայած այն բանին, որ հատուկ հրամա-
նի համաձայն Կարապետյանն իր վաշտերից

մեկն ուղարկել էր 4-րդ բանակի հրամանաւտարության տակ՝ Կուպրին քաղաքի պաշտպաններին աջակցելու, —նա իր բոլոր ուժերը, հրամանատարական հռանդը և հմտությունը գործադրեց թշնամուն դիմագրավելու համար։ Նա անմիջապես հրամանատարական հետախուզություն կատարեց, պարզեց թշնամու ուժերը, նրա հարվածի գլխավոր ուղղությունը։ Նա մի վաշտ, հետախուզված հակատանկային մարտկոցը թողնում է ճեղքման շրջանում՝ որպես առաջակաչ, իսկ գնդի հիմնական ուժերով հարվածում հակառակորդի աջ թևին։ Այս անսպասելի հարվածը գերմանացիներին հարկադրեց նահանջել և պաշտպանության անդնել հունիսի 23-ին։ Հունիսի 24-ին արդեն գերմանական ոմբակոծիչների խոշոր էսկադրիլիաներ սկսեցին ոմբակոծել Կարապետյանի դնդի դիրքերը, իսկ հետևակի և տանկերի գրոհներով թշնամին ցամաքում փորձեր էր անում վերականգնելու նախկին բնագծերը, զարգացնելու նախորդ օրվա հաջողությունը։ Բայց դա չհաջողվեց նրան։ Կարապետյանը

ճիշտ օգտագործելով հետևակի, հակատանկային հրետանու և ականանետերի կրակը, ետ մղեց գերմանացիների բոլոր գրոհները: Կարապետյանի գնդի հատվածում անհաջողության մատնվելով, հակառակորդը փոխում է իր հարվածի ուղղությունը՝ դեպի վարշավա և Սլոնիմի խճուղու երկարությամբ:

Հունիսի 25-ին, 26-ին, 27-ին Կարապետյանի գունդը անսասան կանգնած էր իր գիրքերում և իր ակտիվ գործողություններով մեծ կորուստ էր հասցնում թշնամուն: Սակայն գերմանացիներն արդեն թևանցել էին նրան և փաստական շրջապատումից դուրս գալու համար Կարապետյանին մնում էր միայն մեկ ելք՝ ետ քաշվել դեպի Կարտուզ-Բերյոզա և ավելի արևելք Բարանովիցի ուղղությամբ ու գրավել նոր, բարենըպաստ դիրքեր:

Այսպես քսան օր ու գիշեր Կարապետյանը պաշտպանական և արիերգարդային ծանրը մարտեր մղելով, իր ստորաբաժանումներն անցկացրեց Լյուբլինի շրջանով, Սլուց-

կի անտառներով ու, ճանապարհին հաղթա-
հարելով մի շարք ջրային և այլ արգելքներ,
Մինսկի տակ միացավ Կարմիր Բանակի զո-
րամասերին:

Դա մի հերոսական անցում էր թշնամու
օղակումից դեսի սովետական զորքերի դա-
սավորությունը։ Մի անցում, որի հաջողու-
թյունը մեծապես պայմանավորված էր Կա-
րապետյանի՝ ռազմիկ-հրամանատարի քա-
ջարիությամբ ու հմտությամբ, հաստատա-
կամությամբ ու վճռականությամբ, անձնա-
կան ֆիզիկական քաջառողջությամբ ու կոփ-
վածությամբ։ Հարկավոր էր բառացիորեն
լող տալով կտրել-անցնել ուկրաինական
ջրառատ և արագահոս խորոլ, ապա և Արիս
գետերը։ Քանի՛-քանի՛ մարտական հիանալի
ընկերներ կորան այդ ջրերում։

Մի պահ ջրի հորձանուտը գնդի հրամա-
նատարին ևս վերցրեց իր անողոք տարերքի
մեջ։ Կարապետյանը ծանր երաղի պես է
հիշում բնության տարերքի դեմ իր այդ մա-
քառումը և մարտական ընկերոջ գորովագին
երախտագիտությամբ արտասանում իր ա-

զատարար սերժանտ Կլիմենկոյի անունը, ավտոսալով, որ այսօր հիշողության մաջդմիւար է վերականգնել այն օսեթ կարմիրբանակայինի անունը, որը ուկրաինացի Կլիմենկոյի հետ միասին, իրենց սիրելի մայորին փրկեցին Սրիս գետի հորձանուտից...

Այս օրերից հետո 1941 թվի հուլիսի վերջերին, Կարապետյանը նշանակվում է 199-րդ հրածդային դիվիզիայի 617-րդ զնդի հրամանատար: Այս դնդի հրամանատարի պոստում նա դերմանական զավթիչների դեմ մարտեր է մղում Կոբելյակի շրջանում, նովիե և Ստարիե Սանչարիներում: Նովիե Սանչարիից արևմուտք գտնվող բարձունքի վրա հակառակորդը տանկային գրոհի է անցնում: Բարձունքը պաշտպանում էին Կարապետյանի ստորաբաժանումները: Բախվելով նրանց անհողղող դիմադրությանը, էտ էին գլորվում թշնամու բոլոր գլուհները: Կարապետյանը ուղամիկներին մարտական ոգի էր ներշնչում իր անձնական քաջությամբ ու պարզ, հստակ հորդորներով:

— Մենք կանգնած ենք Սովետական

Պոլտավայի մատուցներում։ Պոլտավան
չենք տա ֆաշիստական շներին։

— Հանուն Հայրենիքի, հանուն Ստալինի
կմեռնենք, բայց չենք տա Պոլտավան, —
կրկնում էին մարտիկներն ու հրամանատար-
ները։

Հակառակորդը հարկադրված էր զիմել
խորամանկ մաների՝ ձախից թևանցիլ բար-
ձունքը և շարժվել դեպի Պոլտավա։

Գերմանացիների այդ խորամանկությու-
նը, սակայն, չվրիպեց Կարապետյանի ուշա-
դրությունից։ Նա թշնամու խորամանկությա-
նը հակադրեց իր հնարամտությունը, նրա
մաներին՝ իր մաները։ Նա բարձունքի վրա
առաջակալ թողնելով գնդի ուժերի մի մա-
սը, իր հիմնական ուժերով դուրս է գալիս
Սանչարի գետի աջ ափը, հարվածում նրա
աջ թևին, դրանով իսկ թշնամուն գրկելով
Սանչարիի և Պոլտավայի ուղղությամբ հար-
ձակումը զարգացնելու հնարավորությունից։
Դրանով սովետական մյուս զորամասերը
հնարավորություն ստացան պաշտպանական
բնագծեր գրավելու Պոլտավայի դիրքերում։

Սկսվեցին պաշտպանական երկարատև
մարտերը։ Կարապետյանի գունդը պաշտ-
պանություն էր բռնել Դակարի խուտորի
շրջանում, փոխգործակցելով 69-րդ հրաձգա-
յին դիվիզիայի զորամասերի հետ։

1941 թվի սեպտեմբերին հակառակորդը
թևանցելով 69-րդ և 199-րդ հրաձգային դի-
վիզիաների մեր պաշտպանվող զորամասե-
րը, շարժվում է դեպի արևելք, գրավում
Պոլտավան։

Կատարելով 38-րդ բանակի հրամանա-
տար գեներալ-մայոր Ֆեկլենկոյի հրամա-
նը, թշնամու կիսաօղակում մնացած մեր
զորամասերը, ծանր մարտերով պահպա-
նում էին իրենց դիրքերը։ Դժվարին վիճակ
էր ստեղծվել։ Նոր հրաման է ստացվում
դիրքերը թողնելու և շրջապատումից դուր-
գալու մասին։ Ռազմա-քաղաքական խոր-
հրրդակցության որոշմամբ Կարապետյանի
գնդին վիճակվում է ընկնել շրջապատված
զորամասերի ավանդարդը։ Դա վկայում է
այն վստահության ու հեղինակության մա-
սին, որ Կարապետյանը նվաճել էր բանակի

Հրամանատարության շրջանում՝ իր հմտութեն վարած գործողություններով։

Կարապետյանի գնդի մարտական խնդիրըն էր՝ ճեղքել թշնամու օղակումը և հնարավորություն տալ մյուս ուժերին դուրս գալու շրջապատումից։ Կարապետյանն ընտրում է Կաշմանովկա խոշոր բնակավայրի ուղղությունն ավանդարդի շարժման համար։ Առջևից գնում էր գնդի հետախուզուղությունը։ Կաշմանովկա բնակավայրին չհասած, երեք կիլոմետրի վրա, երեք ճանապարհների խաչաձևման կետում հետախուզուղությունը կանգ է առնում։ Ո՞ր ճանապարհն ընտրել։ Դիվիդիալիցի խորհուրդ են տալիս շարժվել Կաշմանովկա ընդհանուր ուղղությամբ՝ դեպի արևելք։ Կարապետյանը հայտնվում է հետախուզների մոտ։ Նա գիտեր, որ Կաշմանովկայում մարտ էր գնում գերմանական խմբավորման դեմ։ Նա վճռում է գնդի աջ թևով աջակցել մարտ մղող մեր զորամասերին և, խճուղու ուղղությամբ դեպի Կաշմանովկա շարժվելու փոխարեն, ընտրում է հանդամիջյան ճանապարհը, նպատակ ունե-

նալով դուրս դալ Հիշված բնակավայրի
հյուսիս-արևմտյան ծայրամասը։ Այդ էլ ա-
պահովում է զորամասերի դուրս դալը շրջա-
պատռմից, չնայած նրան, որ Կարապե-
տյանն իր ճանապարհին հարկադրված էր
մարտ ընդունել գերմանական հետևակի մի
խմբի հետ։ Բայց ընդունված ճիշտ վճիռը,
Կարապետյանի անձնական մասնակցությու-
նը ավանդաբղի առաջավոր ջոկատում և օ-
պերատիվ ղեկավարությունը կանխորոշեցին
խնդրի հաջող կատարումը։ Ոչնչացվեց գեր-
մանական հետևակի խումբը, որը փորձում
էր փակել շրջապատման օղակը և մեր զո-
րամասերը դուրս եկան նշված բնագծերը։

Այստեղ Կարապետյանը մարտական նոր
խնդիր է ստանում 38-րդ բանակի հրամա-
նատար՝ գեներալ-մայոր Ֆեկլենկոյից։ Նը-
րան հանձնարարվում էր իր զորամասով
դուրս դալ Վոդյաննայա բնակավայրի և
Սկորոխոդով կայարանի բնագիծը՝ ապա-
հովելու լանակի աջ թևը։ Այսպիսով Կարա-
պետյանի գունդը փաստորեն անցնում էր
համաբանակային անմիջական հրամանա-

տարության տակ, որպես մարտական հաշտուկ առաջադրանքներ կատարող հարվածային ջոկատ:

Հակառակորդը երկու օր անընդհատ կատաղի կերպով գրոհում էր Կարապետյանի գնդի դիրքերը՝ առանց որևէ հաջողության: Երրորդ օրը գունդը փոխադրվում է նոր հատված, որպեսզի ապահովի բանակի կրցանքը: Անխոնջ ու հնարագետ հրամանատարն այստեղ ևս ցուցաբերում է իրեն: Նաստեղում է պաշտպանական կեղծ հենակետեր, մարտի գրավում գերմանացիներին, անսպասելի ու շեշտակի հարվածներով մեծ կորուսներ պատճառում նրանց, հաջողությամբ կատարելով բանակի կցանքն ապահովելու մարտական խնդիրը:

Այս շրջանում մղած մարտերի հնականքով էլ ավելի է աճում Կարապետյանի հեղինակությունը բանակի հրամանատարության մոտ: Պատահական չէր, որ հետագա դաժան մարտերի օրերին նրա զորամասը շպրտվեց Միլերատովոյի հատվածը՝ 76-րդ լեռնա-հրաձգային դիվիզիայի և գեներալ-

մայոր, այժմ Սովետական Միության Հերոս՝ Բելովի Հեծյալ զորամասերի միջև առաջացած ճեղքվածքը փակելու համար:

Դա մի վիթխարի ճակատ էր (20 կիլոմետր աջից, 15 կիլոմետր ձախից): Զինվորական կանոնագրքային ոչ մի նորմատիվ այդպիսի ճակատ չի նախատեսում անգամ հարվածային գնդի համար, որն ուժեղացվում է զդալիորեն մեծաքանակ հրետանիով ու տանկերով: Մինչ Կարապետյանը, չնայած սակավ հրետանուն, տանկեր բոլորովին չուներ, իսկ թևերի հարևանների հետ կապ էր պահպանում բացառապես իր հետախույզների միջոցով և հարկադրված էր կատաղորեն առաջ ներխուժող թշնամու դեմ մարտեր մղել համարյա առանձնացած վիճակում:

Կարապետյանի հրետանավորները գերմանական տանկային գրոհները ետ էին մըղում ուղղակի երթից, բայց դիրքից ուղիղ նշանառությամբ վարած կրակով: Լենինի շքանշանի առաջին կավալերներից մեկը Կարապետյանի հակատանկային հրետանավոր

ներից կրտսեր լեյտենանտ Միշենկոն է, որն աշքի ընկավ պաշտպանական այդ ծանր մարտերի օրերին՝ իր ցուցաբերած արիությամբ ու հրետանային կրակի դիպուկությամբ:

Հիտլերականներն այստեղ ևս դիմում են թեանցման մաներին և հարվածն ուղղում Խուբլյովկա բնակավայրի վրա: Կարապետյանը շտապ կերպով իր մի գումարտակը մեքենաների վրա փոխադրում է այդ հատվածը: Հակառակորդն ուղղվում է ավելի հյուսիս-արևելք, դեպի Կոլոնտայ խոշոր բնակավայրը, ուր մեծ կամուրջ կա ճահճային լայն տարածության վրա: Կարապետյանը իր մյուս երկու գումարտակն ու մնացած ուժերը փոխադրում է Կոլոնտայ, պայթեցնում Կոլոնտայի հիշյալ կամուրջը և ամուր պաշտպանություն գրավում այնտեղ: Սակայն գերմանական զավթիչները, բոլոր ուժերով ու միջոցներով ներխուժում էին դեպի արևելք և իրենց ուժերի մի մասով արդեն դուրս էին եկել կրասնոկուտսկի շրջանը, թիկունքից շրջապատման վտանգ ստեղ-

ծելով Կարապետյանի զորամասի համար Այդ վտանգը շեղոքացնելու համար Կարապետյանն իր ռեզերվային սակավ ուժերով գրավում է Կոլոնտայից արևելք գտնվող բլուրները, դրանով իսկ միաժամանակ աջակցելով գեներալ-մայոր Բելովի՝ հարևան հեծյալ զորամասերի բարենպաստ դիրքեր գրավելուն:

1941 թվի նոյեմբեր ամիսն է։ Արդեն ձյունը ծածկել է ուկրաինական տափաստանները, գյուղերն ու քաղաքները։ Կարապետյանն իր գնդով կանգնած է Կրասնոկուտսկի պաշտպանության դիրքերում։ Հակառակորդը քսան տանկ է նետում Կարապետյանի գնդի հատվածը։ Սովետական մարտիկները հրկիգում են տանկերի մի մասը, մնացածին հարկադրելով դուրս գալ մարտից։ Թշնամին գործի է դնում ավիացիան։ Այդ և շի օգնում նրան։ Եվ հետևակի ու տանկերի ճակատային անհաջող գրոհներից հետո գերմանացիները թևանցում են պաշտպանվողներին, շարժվելով դեպի Բոգոգովյանվոր, որպեսզի կտրեն Կարապետյանի և

Հեծյալ զորամասերի նահանջի ուղին: Եվ
այդ մասամբ հաջողվում է նրանց:

Կարապետյանին հատուկ է արագորեն
կողմնորոշվել նման և այլ բարդ իրադրու-
թյան պայմաններում: Նա մեքենաներով
անհապաղ ուժեր է շպրտում ներխուժած
թշնամու դեմ և, ոչնչացնելով գերմանական
ավտոմատավորների խմբին, ճանապարհ
հարթում իր ուժերի համար: Այնուհետև,
զարդացնելով իր մաները, կարապետյանն
իր մի գումարտակին նետում է Բոգոդուխո-
վոյի արևմտյան ծայրամասը, կապ հաստա-
տում հրաձգային 112-րդ դիվիզիայի և
տանկային 14-րդ բրիգադայի հետ, բռնելով
պաշտպանական ամուր բնագիծ:

Այստեղ կարապետյանն իր գնդին է
միացնում Բոգոդուխովոյի շրջանում գործող
պարտիզանական զոկատը: Այդ զոկատից
գնդին միացած պարտիզան-ղեկավարներից
մեկը — Բոգոդուխովոյի նախկին ռայզին-
կոմ, կապիտան Ռոմանցովը, դարձյալ Կո-
րապետյանի Մելիտոպոլյան պանծալի դի-
վիզիայումն է: Նա նույնպես աճեց Հայրե-

նական պատերազմի բովում՝ հասնելով
փոխգնդապետի կոչման և գերմանա-ֆաշիս-
տական զավթիչների դեմ մղված մարտերում
ցուցաբերած խիզախության ու արիության
համար արժանանալով երկու Կարմիր Աստ-
ղի և Կարմիր Դրոշի շքանշանի:

Դաժան մարտեր սկսվեցին Բոգոդովս-
կոյի համար։ Գերմանացիները ծանր կո-
րուստների գնով 112-րդ հրաձգային դիվի-
զիայի հատվածում ճեղքեցին մեր պաշտո-
պանությունը և դուրս եկան Բոգոդովսկովոյի
արևմտյան ծայրամասը։ Կարապետյանը
փողոցային մարտ փաթաթեց գերմանացի-
ների վզին։

Այստեղ մարտերի ելքը վճռում էր ոչ
միայն մարտավարման նրա հմտությունը,
այլև անձնական այն վճռականությունը՝
համարձակությունն ու քաջությունը, որով
նա համակում էր իր զորամասի մարտիկնե-
րին ու հրամանատարներին։

Հետաքրքիր է մի էպիզոդ։ Բոգոդովս-
կոյի կամուրջի համար մղվող մարտում Կա-
րապետյանը ձի նստած անմիջականորեն

գտնվում էր զորամասի մարտակարգերում:

Ափսոսանքի սուր ճիշ արձակեց հեծյալ դասակի հրամանատարը, տեսնելով ճիռ հետ միասին գետին թափալվող իր հրամանատարին, եվ անսահման էր նրա ուրախությունը, երբ օգնության վազելով սիրելի հրամանատարին, նա՝ նրան գտավ ողջ ու անվնաս: Ֆաշիստական սնայպերը վրիպէլ էր: Նա խոցել էր միայն մայորի ճին:

Մարտերի հաջորդ օրերին, ուժերի վերադասավորում կատարելով 112-րդ հրաձգային դիվիզիայում, Կարապետյանի գունդն ու 14-րդ տանկային բրիգադան գրոհով ետ վերցրին Բոգոդվինովոն գերմանական զավթիչներից: Քաղաքը մի քանի անգամ ձեռքից ձեռք էր անցնում: Մեր զորամասերը հսկայական կորուստներ պատճառեցին հակառակորդին: Քաղաքի փողոցներում թափալվում էին գերմանական սպանված հազարավոր զինվորների և սպաների դիակներ, չարդված տանկերի, հրանոթների, մեքենաների կմախքները:

Բնորոշ է մի այսպիսի մոմենտ: Գերմա-

նացիները մեր մարտիկների շեշտակի հարվածների տակ վիալուստի դիմող իրենց հրանոթային անձնակազմերին ուղղակի ջրկթայել էին հրանոթներին։ Գերմանական Ֆրեժանակորներն այդպես էլ դիակնացել էին՝ շղթայված իրենց հրանոթներին։

1941 թվի դեկտեմբերն է։ Սկսվել են ռեկրախնական սառնամանիքները։ Կարապետյանը հրաման է ստանում զորամասը կուբս բերել մարտերից՝ հանգստի և համալրման համար։ Սակայն նշանակված վայրը՝ Լյուբոտին չհասած, ճանապարհին բախվում է գերմանական զորքերի հետ։ Այդ խարկովից ոչ հեռու Պեսկի գյուղի շրջանումն էր։ Այստեղ Կարապետյանը պատահմամբ հանդիպում է լեռնահրածգային 76-րդ դիվիզիայի դատախազ Տոնոյանին։

Հակառակորդի մասին վերջինիցս ստացած լրացուցիչ տեղեկություններն օգնեցին նրան։ Նա իր գումարտակներից մեկը առաջակալ թողնելով, մնացած ուժերով անմիջապես միացավ 76-րդ լեռնահրածգային դիվիզիայի զորամասերին, նպատակ ունե-

Նալով նրանց հետ միասին կազմակերպել
հատվածի պաշտպանությունը:

Պաշտպանական ծանր մարտերում զգա-
լի կորուստներ կրած այս դիվիզիայում՝ այն-
պիսի դրություն էր ստեղծվել, որ այդ օրե-
րին արդեն փոխգնդապետի կոչմանն արժա-
նացած Կարապետյանի պես կադրային հը-
մուտ սպայի հայտնվելը մարտական հաջո-
ղության երաշխիք ու հույս ներշնչող մի-
երևույթ էր բոլորի համար: Դիվիզիայի կո-
միսար Գերասիմովը Կարապետյանին խընդ-
րում է ստանձնել պաշտպանության գործի
ղեկավարությունը, պաշտպանվող զորամա-
սերի ընդհանուր հրամանատարությունը՝
տվյալ հատվածում: Եվ իրոք, Կարապետյա-
նը հաջողությամբ կազմակերպեց պաշտպա-
նությունը, արյունահեղ մարտերում ծանր
կորուստներ պատճառելով գերմանա-ֆաշիս-
տական զավթիչներին: Կարապետյանին է
պատկանում այս մարտերում գեներալ-մա-
յոր Զիլբերտի գերմանական հետևակային-
դիվիզիան զախչախելու պատիվը:

Եռակի շքանշանակիր գնդապետ Ֆեոդոր

Կոնստանտինովիչ Պերեգրիենկոն, Կարաշ-
պետյանի մարտական ընկերներից մեկը,
որն այդ օրերին դիվիզիայի քաղբաժնի պե-
տի տեղակալն է եւել, հետևյալն է պատ-
մում այդ մարտերի ժամին:

«Այդ ծանր օրերին Կարապետյանի մոտ
ևս նկատում էի նրա հանգիստ, անխռով
բնավորությունը, իրադրությունը ճիշտ ըմ-
բռնելու և գնահատելու կարողությունը:
Հատկապես աշքի էր ընկնում ռազմական
գործի նրա խոր ըմբռնումը. և դրա հետ
միասին՝ համեստությունը և՛ աշխատան-
քում, և՛ արտաքինում ու վարվելակերպի
մեջ».

Այդ օրերին Կարապետյանը ոչ միայն
617-րդ գնդի հրամանատարն էր, այլև գոլ-
խավորում էր երկու գնդերից կազմված մի
խմբի: Եվ պետք է ասել, որ ձեռք բերված
մարտական հաջողության պատիվը, Զուգու-
կի տակ, Նովի Լիմանի և Գրակովյի մոտ
մղված մարտերում գեներալ-մայոր Զիլբեր-
տի գերմանական 297-րդ հետևակային դի-

դյուրության անդամանությանը միանալ

Վիզիայի ջախջախման պատիվը պատկաւնում է Կարապետյանին»:

Այս ժամանակ է, որ Կարասէհտյանը բանակի հրամանատարությունից հրաման է ստանում գունդը փոխադրել Զուգումի մեր օդանավակայանը պաշտպանելու համար։ Այս խնդիրը նույնպես նա կատարում է հաջողությամբ։ Իսկ երբ Խարկովի անկումից հետո հակառակորդն ուժեղացնում է իր ճնշումը Զուգումից արևելք, Պեչենեցի բնակավայրի շրջանում, Կարապետյանը խնդիր է ստանում իր զորամասով պաշտպանել այդ հատվածը և թշնամուն կասեցնել Կուպյանսկի ուղղությամբ։

Մարտական խնդրի կատարումը պահանջում էր ոչ միայն սեփական ուժերի ճիշտ դասավորում և օգտագործում, այլև հստակ ու էֆեկտիվ փոխգործողության ապահովում՝ հալ ևան զորամասերի հետ։

Կարապետյանն իր շտաբայիններից մեկին հատուկ գրությամբ ուղարկում է աջից հարեան գնդի հրամանատարի մոտ, նրան առաջարկելով փոխգործողության իր պլանը։

Շտաբային սպան զարժացել էր, տհանիւ-
լով այն աշխատմն ու ողերությունը, որ
պատեց փոխդնդապետի գրությունն ընթեր-
ցող հրամանատարին։ Մի պայծառ չող ցո-
լաց ըստ արտաքին նշանների կովկասցի այդ
մարդու անքուն անցկացրած գիշերներից
հոգնած ու դալուկ դեմքին։ Նա անմիջապես
վերցրեց հեռախոսափողը և սրտալի գրուց
սկսեց իր հարեւանի հետ։

— Ասքո ջան, այդ կո՞ւ ես։ Դու ձախից,
ես աջից՝ հարվածենք ֆաշիստներին։ Դու
անհոգ կաց, ես ումեն ինչ կանեմ, կօգնեմ
քեզ։

Հաջորդ օրը շտաբային սպան մի կար-
միրբանակայինի հետ միասին նորից հայտ-
նրվեց հարեւան դնդի արդեն ծանոթ հրամա-
նատարի բլինդաժում։ Կատարելով փոխ-
դնդապետի հրամանը, նրանք նվերներ էին
բերել իրենց կովկասցի հարեւանին՝ մի մուշ-
տակ, փափախ, բրդե ձեռնոցներ և գինի...

Դա հետագայում Սովետական Միու-
թյան Հերոսի կոչմանն արժանացած գնդա-

պետ Լևոն Դարբինյանն էր, Կարապետյանի
մարտական հին ընկերներից մեկը։

Սակայն երկու ընկերների, հետագա եր-
կու հերոսների իսկական հանդիպումը տեղի
ունեցավ բոլորովին այլ պայմաններում։

Կարապետյանը մի օր հրաման ստացավ
անհապաղ ներկայանալ շտաբ։ Երբ նա դի-
վիզիայի հրամանատարի բլինդաժում ըզ-
դաստ կանգնած զեկուցում էր իր ժամանե-
լու մասին, սա ընկերական մտերիմ տոնով
ընդմիջեց նրա զեկուցումը, դիմելով կողքին
նստած սև, երկար բեխ ու միրուրվ փա-
փախավոր մարդուն։

— Вот ои, пожалуйста, познакомитесь!

Այդ մարդը նույն ինքը Լևոն Դարբի-
նյանն էր, որն անմիջապես առաջ վաղելով
փաթաթվում է սիրելի ընկերոջը՝ Ասքոյին և
շերմորեն համբուրվում նրա հետ։

— Хочешь, не хочешь, я тебя поцелую,
— шептум է նա ոռուերեն, և դասնալով դի-
վիզիայի հրամանատարին, կարծես ներողու-

թյուն է խնդրում իր սրտաղեղման համար:

— Может умру, не увержу...

Այս սրտառուչ հանդիպումը եղավ երկու ընկերների, Հայրենական պատերազմի երկու Հերոսների վերջին հանդիպումը:

Նրանց կազմակերպած պաշտպանությունը Պեշենեկի բնակավայրի հատվածում անառիկ բնադիծ դարձավ գերմանական բանդաների համար: Այստեղ վարած պաշտպանական հաջող գործողությունների համար Կարապետյանը արժանացավ 38-րդ բանակի հրամանատար գեներալ-մայոր Մուկալենկոյի հատուկ խրախուսանքին:

Նրա վարած պաշտպանական այդ մարտերը բնորոշ են ակտիվ ու վճռական գործողություններով: Այսպես, Խարկովի տակ մղած մարտերի ժամանակ նա հաճախակի գրոհներով արյունաքամ էր անում թշնամուն և, ըստ հնարավորի, զարգացնելով գրոհների հաջողությունը, մի անգամ հասավ մինչև

Խարկովի տրակտորային գործարանի շրջանը:

Նիշտ այնպես, ինչպես քաղաքացիական կոխվներին, նժդեհականների դեմ մղած մարտերին ուղտերի երամակն էր օգտագործում թշնամուն խաբելու և ապակողմնորոշելու համար, նույնպես և այստեղ Կարապետյանը դիմում է հակառակորդին խաբելու, հանկարծակի բերելու, շեշտակի հարվածով նրան ջախջախելու հնարներին։ Ըստ որում, նա ամեն կերպ խրախուսում է ստորագրյալների ուղմական հնարամտությունը և խորամանկությունը, աջակցում նրանց խելացի նախաձեռնություններին ու ինքնագործունեությանը։

Այս տեսակներից բնորոշ են Խարկովի մոտ Շելշենկո գյուղի համար մղած մարտերը։

Գերմանացիներն ուժեղ կերպով ամրացել էին Շելշենկո գյուղի բնադրում։ Մեր զորամասերի գրոհներն ապարդյուն էին անցնում։

Այդ ժամանակ էր, որ Կարապետյանի

կրտսեր հրամանատարներից Կոչետկովը դիմում է նրան, որ թույլ տա իրեն մի խմբով վերցնել գյուղը:

Կարապետյանն ուշադրությամբ լսում է կրտսեր լեյտենանտին, իր ուղղումները մտցնում նրա պլանում, համաձայնություն է տալիս: Եվ իրոք Կոչետկովը 50 հոգիանոց մի ջոկատով գիշերը թափանցում է Շեշենկո գյուղը, իրարանցշամ և խուճապ առաջ բերում հիտլերականների բանակատեղում և դրանով իսկ վճռում մարտի ելքը, ազատագրելով գյուղը: Կարապետյանն անմիջապես այստեղ է շարժում զորամասի մյուս ուժերը՝ հաջողությունն ամրապնդելու համար:

Հաջորդ օրը դիվիզիայում զարմանում էին կատարված իրողության վրա, երբ Կարապետյանը հրամանատարական իր նոր կետից — Շեշենկոյից հեռախոսով կապվել էր դիվիզիայի շտաբի հետ:

Այս գործողության համար կրտսեր լեյտենանտ Կոչետկովը արժանացավ Լենինի շքանշանի: Հետագայում նա դասակի հրա-

մանատարից աճեց և դարձավ գումարտակի հրամանատար:

Կարապետյանը Խարկովի տակ պաշտպանական մարտեր էր մղում մինչև 1942 թվի ապրիլի վերջերը, երբ հրաման է ստանում մեկնել Մոսկվա՝ սովորելու Ֆրունզեի անվան Ռազմական Ակադեմիայում:

Հեշտ ու ցանկալի շէր մարտական թանկադին՝ ընկերներից, մարտերի կրակում համախմբված ու կոփված սեփական կոլեկտիվից բաժանվելը: Բայց զինվորականի համար հրամանը անխախտելի օրենք է: Եվ նա մեկնում է Մոսկվա՝ այն Ակադեմիայում կատարելագործելու իր ռազմական գիտելիքները, լրացնելու տեսական պաշտրը, որի հեռակա ուսանողն էր դեռ մինչև Հայրենական պատերազմի սկիզբը: Այստեղ նա անմիջապես ընդունվում է Ակադեմիայի 3-րդ կուրսը և արագացրած դասընթացն ավարտելով՝ սեպտեմբերին «լավ» գնահատականով, ուղարկվում է Սարատով, որպես մոտոմեքենայացված բրիգադայի հրամանատար:

ՍՏԱԼԻՆԳՐԱԴԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ
ԴԻՐՔԵՐՈՒՄ

ԱՀԵՂ ու ծանր օրեր էր ապրում Սովետական Երկիրը։ Գերմանա-ֆաշիստական հրոսակախմբերը շոքել էին ռուսական մեծ դետ մայր Վոլգայի ափերին, կատաղի գրոհների անցնելով Ստալինգրադի հերոսական պաշտպանների դեմ։

Արյունահեղ ճակատամարտ էր բորբոքվում Ստալինգրադի համար և բոլորն զգում ու գիտակցում էին, որ դա վճռական ճակատամարտն է Սովետական Երկրի համար։ Զէ՞ որ միջազգային լուսնոտը, խելահեղ ֆյուրերը ձգտում էր Ստալինգրադի առողմով դուրս գալ մեր Երկրի խոր թիկունքները՝ դեպի Ռուսական իրականացնել Մոսկվան թիկունքից վերցնելու, դեպի Կովկաս ու մերձավոր Արևելք դուրս գալու խելացնոր ծրագիրը։

Սովետական ամբողջ Երկիրը, ռազմաճակատն ու թիկունքը համախմբված հանձարեղ զորավար մեծ Ստալինի շուրջը, շունչները

պահած Հետևում էին Ստալինգրադի ճակատամարտին, լարում իրենց ուժերը, կրկնապատկում իրենց հարվածները։ Առաջադեմ ամբողջ մարդկությունն իր հայացքը հառել էր Ստալինգրադի վրա։

Երկրի լավագույն զորագնդերն ու զորավարները ուղարկվում էին այնտեղ, զորամասերը հագեցվում էին սովետական աճող նորագույն տեխնիկայով։ Երկաթե հաստատակամությամբ օր ու գիշեր նախապատրաստվում էր վճռական հարվածը՝ գերմանաֆաշիստական բանդաներին։

Փոխգնդապետ Կարապետյանը նույնպես այստեղ էր՝ 4-րդ մոտո-մեքենայացված կորպուսի 60-րդ բրիգադայի հրամանատարի պոստում։ Նրա բրիգադան դասավորվել էր ջացա լճի բնագծում և այստեղից էլ պատրաստվում էր ահեղ թոփչքի՝ գերմանաֆաշիստական զավթիչների վրա։

Օր ու գիշեր շդադարող արյունալի մարտերի և թշնամու ավիացիայի կատաղի հարձակումների պայմաններում Կարապետյանը ծավալում էր տանկիստների, հրե-

տանավորների և ականաձիգների ուժուցիչ մը, կատարելագործում նրանց մարտական վարժվածությունը։ Հատուկ հարմարանքներ (կեռեր) էին պատրաստում տանկերի համար, որպեսզի հնարավոր լինի հրետանի կցել նրանց։ Ականանետերն ամրացվում էին ավտոմեքենաների վրա, որպեսզի ուղղակի ընթացքից կրակ վարեն թշնամու դեմ եվ, որպեսզի մեքենաների սոնիները (ռեսսորները) շշարդվին, դրանց տակ կոճափայտեր (շպալ) էին հագցվում։ Հրետանավորներին ու տանկիստներին վարժեցնում էին ընթացքից դիպուկ կրակ վարելուն՝ առանց կարճատև կանգառումների։ Մոտոհետեակացիններին սովորեցնում էին հստակ ու ճիշտ փոխգործողություն՝ տանկային, հրետանային և ականանետային անձնակազմերի հետ։

Այս ամենն այդ ժամանակ նորություն էր մեր մարտական պրակտիկայում։ Այս նորությունը, Հայրենական պատերազմի անցած շրջանի փորձը, դարձվում էր մարտիկների լայն մասսաների սեփականու-

թյուն։ Այդպես էր իրականացվում՝ անընդհատ ուսուցման ու մարտական վարժվածությունը կտտաբելագործելու մասին Գերագույն Գլխավոր Հրամանատար, Սովետական Միության Մարշալ ընկեր Ստալինի հրամանը։

Կարապետյանի բրիգադայում հաճախ լինում էին Սովետական Միության Մարշալ Վասիլևսկին, Ստալինգրադի ճակատի Ռազմական Խորհրդի անդամ գեներալ-գնդապետ Խրուշչևը, անձամբ օպերատիվ կերպով՝ օգնում և ղեկավարում, խորհրդական տակտիսներ նրան, խրախուսելով նաև կատարված դրական աշխատանքը։

1942 թվի նոյեմբերի վերջերքին ամեն ինչ արդեն կազմ ու պատրաստ էր և մարտական պատրաստականության բերված։ Տանկային պանծալի անձնակազմերը, քաջարի հրետանավորներն ու ականաձիգները, մոտոհետևակայինները, անհամբեր սպասում էին հարձակման հրամանին...

Եվ հրամանը տրվեց ժամանակին։ 1942 թվի նոյեմբերի 9-ին Կարապետյանի մոտո-

մեքենայացված բրիգադան Ստալինգրադի
ռազմաճակատի Ռազմական Խորհրդից ան-
միջական մարտական խնդիր ստացավ՝ ճեղ-
քել գերմանական զորքերի պաշտպանու-
թյունը Ցացա լճի շրջանից Պլոտովիտայի
ուղղությամբ՝ Օբկոներևո կիսակայարանի,
Զեդա գյուղի, Սովետսկայա ստանիցայի
վրայով, շարժվելով ընդհանուր ուղղությամբ
դեպի Կալաչ:

Այդ հերոսամարտին նվիրված «Ստալին-
դրադ» կինոնկարը տպավորել է այն, թե ինչ-
պես սովետական ծանր ու արագընթաց
տանկերը, մեքենաների վրա ամրացված
հրետանին ու ականանետերը խորտակում
են գերմանական պաշտպանական ամրու-
թյունները, չարդ ու փշուր անում լարափա-
կոցներն ու ԴԶՕՏ-ները և, մաս սփռելով
մեր մեծ Հայրենիքն ստրկացնելու եկած
հիտլերյան ավագակների շարքերում, ճա-
նապարհ հարթում սովետական փառապանծ
հետեակի համար:

Սովետական պանծալի զորագնդերի
շարքումն նն Կարապետյանի բրիգադայի

տանկիստներն ու Հրետանավորները, նրա
ականաձիգներն ու մոտոհետեակայինները,
որոնք իրենց կորպուսի ու բրիգադայի հա-
մար ստալինգրադյան հոշակ ու փառք նվա-
ճեցին պատերազմների պատմության մեջ
երբեցից մղված պատմական այդ մեծագույն
ճակատամարտում:

Հրամանատարական իր № 50 տանկի
վրա նստած փոխգնդապետ Ա. Կարապե-
տյանը անմիջականորեն մասնակցում և օ-
պերատիվ կերպով ղեկավարում է իր խի-
զախների մղած վճռական մարտը: Մարտա-
շարքերում ընթանալու վճիռը բխում էր
մարտական բարդ իրադրությունից: Թշնա-
մու զորքերի խիտ կուտակվածության պայ-
մաններում մոտոհետեակի սրընթաց հար-
ձակումը պահանջում էր անհապաղ, ճիշտ
կողմնորոշում և բացառիկորեն օպերատիվ
ղեկավարություն: Անմիջականորեն մարտա-
շարքերի հետ շարժվող հրամանատարը մի-
այն կարող է ապահովել այդ: Մարտական
իրականությունը և դեպքերի զարգացման

Հետագա ընթացքը արդարացրին Կարապետյանի այդ վճիռը:

Բրիգադան շեշտակի հարվածով արդեն ճեղքել էր գերմանական պաշտպանությունը և առաջ էր սլանում, երբ Պլոտովիտայից արևելք նրա դեմ է դուրս գալիս ոռոմինական թագավորական հրետանային 1-ին գունդը և ոռոմինական հետևակի երկու գունդ:

Դա լուրջ ուժ էր: Դրան հարկավոր էր հակադրել և ուժ, և մանավանդ՝ ուղմական հնարամտություն ու խորամանկություն: Եվ Կարապետյանը դիմում է մաների: Նա իր ամբողջ հրետանին և ականանետերը դասավորում է կրակային դիրքերում. տանկային դեսանտով ցուցադրական հարձակում է սկսում հակառակորդի աջ թևից, իսկ բուն հարվածը հասցնում է նրա ձախ թևին՝ տանկային գնդի և մոտոհետևակի ուժերով: Միաժամանակ նա իր ռեզերվումն էր պահել մի գումարտակ և հետախուզիչ գումարտակը:

Կարապետյանի տանկերի ահռելի երթը

թշնամու վրա բավական եղավ, որպեսզի
ոռւմինական թագավորական հրետանային
առաջին գունդն ամբողջ կազմով անձնա-
տուր լիներ նրան։ Դրանով բրիգադան մի-
անգամից դուրս եկավ հակառակորդի գերա-
կշիռ ուժերի թիկունքը։

Բրիգադայի հաջող գործողությունը հի-
ացմունքի առարկա էր դարձել բարձր հրա-
մանատարության շրջանում։ 57-րդ բանա-
կի մազմական խորհրդի անդամ գեներալ-
մայոր Խալզովը, որ անձամբ հետնում էր
գործողության ընթացքին, հրամայում է իր
համհարզին՝ գրի առնել բրիգադայի հրա-
մանատարի ազգանունը, իսկ քիչ անց ան-
ձամբ հայտնվելով Կարապետյանի կողքին,
հարց է տալիս նրան։

— Նո՞ւ, ինչ եք մտադիր անելու այժմ...

— Կարող եք կանգնել և տեսնել, թե
ինչ եմ անելու, — անվրդով և անելիքը վրճ-
ուած մարդու տոնով պատասխանում է փոխ-
գնդապետը։

Այդ ժամանակ նրա հրամանով բրիգա-
դայի ամբողջ հրետանին, տանկերն ու ակա-

նանետերը մի սարսափելի համազարկացին կրակ բացին հակառակորդի դեմ։ Համազարկացին այդ ահռելի կրակն էլ վճռեց մարտի ելքը։ Անսպասելի ուժի կրակացին ալիքի մեջ ընկած, ահ ու սարսափ պատաժ ուսմինական հետևակի երկու գունդն էլ դերի հանձնվեցին իրենց հրամանատարների և շտաբների հետ միասին։

Այնուհետև Կարապետյանի մոտո-մեքենայացված բրիգադան որընթաց շարունակում է հարձակումը։ Ծրկոներնոյն մոտ 70-րդ կիսակայարանի (բազեզ) շրջանում դասավորվել էր գերմանական ուժեղացված մի գումարտակ, որը պաշտպանում էր ուղամմամթերքի, պարենամթերքի և ուղմակուն գույքի պահեստները։ Բրիգադան ընթացքից հասցրած շշմեցուցիչ հարվածով համարյա գլխովին ոչնչացրեց այդ գումարտակը և գրավեց գերմանական սպառազինքի, պարենամթերքի և գույքի պահեստները։

Այստեղից բրիգադայի հրամանատարը հետախուզություն է ուղարկում Զեղա դյուզը և, հետախուզության հետքերով առաջ

շարժվելով, նոյեմբերի 20-ի երեկոյան ժամը 22.00-ին գրավում է Զեղա դյուլը։ Նոյեմբերի 21-ին բրիգադայի ստորաբաժանումներն արդեն դուրս են զալիս Վերխնե ու Նիժնի Յարիցինների և Սովետսկայա ստանիցայի ուղղությամբ և օրվա վերջին ազատագրում Սովետսկայան։ Նոյեմբերի 22-ի լուսաբացին բրիգադայի հետախույզները, որոնք շարժվում էին Կալաշի ուղղությամբ, անմիջական կապ են հաստատում Ստալինգրադի հյուսիսից հարձակվող Դոնի ռազմաճակատի զորքերի առաջավոր ջոկատների հետ։ Այսպես Սովետսկայա ստանիցայի և Կալաշի միջև իրար հանդիպեցին հաղթական հարձակման տարերքն ապրող երկու ռազմաճակատների ռազմիկները, գրկախառնվեցին, համբուրգեցին։

Սրանով ավարտվում էր գերմանա-ֆաշիստական զորքերի Ստալինգրադի խմբավորման շրջապատճեմը։

Բրիգադան նոր խնդիր է ստանում՝ հարձակումը շարունակել, կապիչներ ուղղությամբ, տիրել կապիչներն, կուկովսկայացին,

Նեմկովսկայային, դուրս գալ Դոն գետի
բնագիծը, դրանով իսկ կտրելով իր շրջա-
պատված խմբավորմանը օգնության հաս-
նելու հակառակորդի մերձեցման ուղիները
(խճուղին, երկաթուղին):

Հարձակողական մարտերով առաջ շարժ-
վելով, բրիգադան հաջողությամբ կատարում
է իր մարտական խնդիրը: Միայն Լապիչև
քաղաքում բրիգադան հակառակորդից խլեց
հսկայական ռազմական ավար՝ գերմանա-
կան հրետանային բազան, 28 սարքին
տանկ, վեցփողանի վեց ականանետ, գրա-
վեց ռազմամթերքի ու պարենամթերքի տաս-
նյակ պահեստներ, սպառազինություն ու
պարենամթերք բարձած երկաթուղային 12
էշելոն: Բրիգադան միաժամանակ այստեղ
գերեվարում է գերմանական 400 զինվոր,
28 սպա, ազատագրելով նաև սովհոտական
ավելի քան 2000 ռազմագերի:

Ստալինգրադի համար — գերմանա-ֆա-
շիստական զավթիչների դեմ մղվող պայքա-
րի ճակատում հրամանատարության մար-
տական առաջադրանքներն օրինակելիորեն

կատարելու և այդ գործում ցուցաբերած ա-
րիության ու քաջության համար, ՍՍՌՄ Գե-
րագույն Սովետի Նախագահության 1943
թվի փետրվարի 2-ի Հրամանագրով փոխ-
պնդապետ Ասքանազ Կարապետյանը պար-
դևատրվում է Կարմիր Դրոշի շքանշանով, ա-
պա՝ «Ստալինգրադի պաշտպանության հա-
մար» մեդալով։ Նրա ղեկավարած բրիգադան
վերակազմվում է գվարդիական 9-րդ մոտո-
մեքենայացված բրիգադայի՝ մոտո-մեքենա-
յական 4-րդ կորպուսի կազմում։ Բրիգադա-
յին ու կորպուսին շնորհվում է Ստալին-
գրադյան անուն, իսկ նրանց պանծալի մար-
տիկներն ու հրամանատարներն արժանա-
նում են գվարդիական բարձր կոչման։ Այս
ժամանակ էլ ՍՍՌ Միության Ժողովրդա-
կան Կոմիսարների Սովետի որոշմամբ
գվարդիայի փոխպնդապետ Կարապետյանին
շնորհվում է գվարդիայի գնդապետի
զինվորական կոչում։ Սակայն նա այդ մա-
սին իմանում է վեց ամիս անց, երբ
որպես ղիպիղիայի հրամանատար նրան
ներկայացրել էին զինվորական հերթական

կոչում շնորհելու... Նրան զարդարող համեստությունը, բոլոր ուժերով, ամբողջ հոգով բացառապես մարտական կյանքով կլանված լինելը, իրենց արտահայտությունն էին գտել և այստեղ:

Ստալինգրադում շրջապատված գերմանա-ֆաշիստական զորքերի բնաջնջման կամ գերեվարման համար մղվող ճակատամարտը մտավ նոր փուլի մեջ: Մինչ մեր զորքերը օրեց-օր ավելի ու ավելի էին սեղմում շրջապատման երկաթե օղակը գերմանական զորքերի շուրջ, Հիտլերյան հրամանատարությունը նորանոր ռեզերվներ էր նետում Ստալինգրադի ուղղությամբ՝ իր զորքերին օգնություն հասցնելու նպատակով:

Այսպես գերմանական հրամանատարությունը կոտյոլնիկովոյի ուղղությամբ տանկա-մոտո-հետևակային ուժեղացված մի բանակ է նետում իր զորքերի շրջապատման օղակը ճեղքելու համար:

Դեկտեմբերյան դաժան սառնամանիքներին գվարդիայի գնդապետ Կարապետյանի բրիգադան շարժվում էր Կոտյոլնիկովոյի

ուղղությամբ՝ կատարելու հրամանատարության մարտական նոր առաջադրանքը՝ դիմագրավելու կատեցնել դեպի Ստալինգրադ խցկվել փորձող հակառակորդի ուժերին։

Վերիսնե ու նիժնիե Կումսկիների շրջանում բրիգադայի առաջավոր ստորաբաժանումները հանդիպեցին հակառակորդին։ Հիտլերականները տեսնելով, որ ուժերի գերակշռությունն իրենց կողմն է, փորձում են ծուղակ սարքել մեր ստորաբաժանումների համար։ Նրանք թույլ են տալիս, որպեսզի մերոնք խրվին նրանց դասավորության մեջ և այնուհետև հարվածելով աջ ու ձախ թևերից, շրջապատման սպառնալիքի տակ են դնում մեր ստորաբաժանումները։

Կարապետյանը, սակայն, հմուտ հրամանատարի իր հոտառությամբ՝ ժամանակին կռահեց հիտլերականների մտադրությունը և, փոխգործակցելով ադրբեջանական ժողովրդի քաջարի զավակ, Սովետական Միության Հերոս Ասլանովի ստորաբաժանումների հետ, ոչ միայն հաղթահարում է գեղմանացիների ծուղակը, որ մասամբ

Հաջողվել էր նրանց, այլև Հիտլերականներին ետ է շպրտում դեպի Կոտյոլնիկովո և տիրում տասնյակ բնակավայրերի։ Այնուհետև, զարգացնելով հաջող հարձակումը, նա գերմանական զավթիչներից ազատագրում է Կոտյոլնիկովոն, Զիմովնիկին, Մարտինովկան, Վեսյոլին և Խոստովի ու Նովո-Զերկասկի արանքով դուրս գալիս Մատվեև-Կուրգան՝ Միուս գետի բնագիծը։

Հետեակի մարտական կանոնագրքի համաձայն հրամանատարը գորքի մարտակարգում գրավում է իր համապատասխան տեղը։ Սակայն մարտական իրադրությունը երբեմն հարկադրում է շեղվել կանոնագրքացին այդ պահանջներից։ Կարապետյանի հանձնակատար, շքանշանակիր ավագ Գրիշա Արխիմենկոն, որ Ստալինգրադի ճակատամարտի օրերից իր բախտը սերտորեն կապել է գեներալի հետ, բաժանելով նրա հետ մարտական կյանքի դառնություններն ու ուրախությունները, Վերխնե Կումսկիի շոշանում մղված մարտերից հիշում է մի հետաքրքիր էպիզոդ։ Այս էպիզոդում կանո-

Նագրքային պահանջներից որոշ շեղում կա, բայց այն խոսում է Կարապետյանի օդ-
տին:

Վերխնե Կումսկիի շրջանում բրիգադայի ավանդարդը բախվում է գերմանական 25 տանկերի շարասյունին: Երթի ընթացքին հետևող բրիգադայի հրամանատարն այդ պահին իր «Էմկայի» վրա երևում է ավանդարդի շրջանում: Այդ մասին անմիջապես զեկուցում են նրան:

Կարապետյանը կտրուկ հրամաններ է տալիս անհապաղ բացազատվելու, դիրքեր գրավելու և տանկային գրոհը ետ մղելու մասին: Իսկ ինքն անցնում է հակառանկային հրանդիթի մոտ և, որպես նշանառու աշխատելով, սկսում է կրակ վարել գերմանական տանկերի դեմ: Բրիգադայի ավանդարդի վճռական գործողությունների և Կարապետյանի անձամբ վարած հրետանային կրակի շնորհիվ, գերմանական 10 տանկ շարդվում ու շարքից դուրս է բերվում, իսկ մնացածները փախուստի են դիմում:

— Բատկոն լավ հրաձիգ է և դիպուկ

Հրետանավոր,— եզրափակում է Գրիշան իր պատմությունը:

Միուս գետի բնագծում գերմանացիները կառշել էին վաղօրոք պատրապտած պաշտպանական դիրքերին: Դաժան մարտեր ըսկըսվեցին այդ բնագծից նրանց դեն շպրտելու համար: Եվ մինչ Կարապետյանն արյունալի մարտերում արյունաքամ էր անում թշնամուն, կրծում նրա պաշտպանությունը, 1943 թվի մայիսի 12-ին Հարավային ռազմաճակատի հրամանատար, բանակի գեներալ, այժմ Սովետական Միության Մարշալ Տոլբուխինի հրամանով նշանակվում է Ա Հետևակային դիվիզիայի հրամանատարի տեղակալ շարային գծով:

Դիվիզիայում շուրթից շուրթ անցավ Կարապետյանի անունը: Անմիջապես վերջիշեցին, ճանաշեցին Ստալինդրադյան, Գվարդիական այն բրիգադայի հրամանատարին, որը հաղթական հարձակման օրերին Նիժնայա Զիրսկայա բնակավայրի մոտ մարտական օգնության ձեռք էր մեկնել իրենց թիկունքներից կտրված դիվիզիայի

ստորաբաժանումներին, նրանց ապահովելով ռազմամթերքով ու պարենամթերքով:

Այլ պայմաններում գուցե մոռացման դատապարտված այս փաստը մի առիթ դարձավ, որպեսզի նա միանգամից ժողովրդականանա դիվիզիայում: Իսկ հետագա ճակատամարտերում նրա ցուցաբերած հրամանատարական հմտությունը, անձնական քաջությունը և խստապահանջությանը զուգորդված զգայուն, արձագանքող ընկերականությունը նրան շուտով դարձրին մարտիկների ու հրամանատարների սիրելին, պաշտելին:

Կարապետյանի պես ռազմական գործին գիտակ ու քաջարի հրամանատարի հայտնըլելն այստեղ հաճախ վճռում էր ամենաբարդ ու ծանր մարտերի ելքը: Որպես միավորման հրամանատարի տեղակալ, նա մըշտապես լինելով ստորաբաժանումներում, մի տեսակ հրամանատարական կենդանի կետ էր կարծես նրանց համար: Եվ երբ նա հրամանատարական կետումն էր, իսկ համարյա անփոփոխ կերպով նա էր այնտեղ

լինում, եթե ստորաբաժանումներում չէր գտնվում, ապա բոլորը ձգտում էին լսել նրա խորհուրդը, իմանալ նրա կարծիքը, խորհրդակցել նրա հետ, ստանալ նրա հրամանը:

Կարճ ժամանակամիջոցում Կարապետյանը ծանոթանում է դիվիզիայի հրամանատարական ու քաղաքական կազմի հետ, նրա մարտունակությանը և անհապաղ ձեռնամուխ լինում Միուսի հատվածում ստեղծված իրադրության պայմաններում դիվիզիայի մարտական խնդրի կատարմանը:

Հարկավոր էր ստորաբաժանումները նախապատրաստել գերմանական երկարատև պաշտպանության ճեղքմանը: Դիվիզիայի հատվածում Միուս գետի ափը դիք էր և ապառաժությունը է ծավալվում ափը հարթելու, գետանցներ պատրաստելու համար: Պատրաստվել էին նաև լրացուցիչ գետանցներ, պոնտոններ, որոնք սակայն պահվում էին հարձակման համար:

Այս բոլորին զուգընթաց Կարապետյանն

ամբողջապես կլանված էր ճեղքման համար անձնակազմն ուսուցանելու գործով։ Զորամասի թիկունքում ստեղծված համապատասխան վարժադաշտի վրա գումարտակներն օրնիբուն վարժություններ էին կատարում Կարապետյանի անմիջական ղեկավարությամբ։ Առջևի եզրում սակրավորները գիշերվա խավարով ծածկված՝ հակառակորդին մոտենալու պունդներ էին փորում, հարձակման ժամանակ այնտեղից գրոհային թոփշք կատարելու համար, իսկ հետախույզներն ամեն օր լրացուցիչ «լեզուներ» էին ճարում, բացահայտում ու ճշտում հակառակորդի ուժերի ու կրակային սիստեմի մասին տվյալները։ Հրետանավորները կոնկրետ խնդիրներ էին ստանում թշնամու կրակակետերը ոչնչացնելու վերաբերյալ։

Հարձակման նախօրյակին մայոր Երեմենկոյի գումարտակը ավելատրված կրակային միջոցներով ուժային հետախույզության անցավ կամ այլ կերպ ասած՝ հետախույզություն սկսեց մարտով։ Այդ մարտի շնորհիվ գումարտակին հաջողվեց համարյա

բոլոր ուղղություններում գետանցներ ըստեղծել Միուսի վրա, բացի դրանից, գերի վերցվեց նաև գերմանական 18 զինվոր և սպա:

1943 թվի հուլիսի 17-ին Հրետանային երկօրյա նախապատրաստությունից հետո՝ Սրեմենկոյի գումարտակի՝ Միուսի աջ ափին գրաված պլացդարմի ուղղությամբ հարձակման է անցնում նաև հաջորդ գումարտակը, ընդլայնելով գերմանական պաշտպանության մեջ առաջացված ճեղքվածքը։ Այնուհետև Կարապետյանն այդ ճեղքվածքի մեջ նետում է գնդապետ Պերեգրիենկոյի գունդը և, զարգացնելով հաջողությունը, հարձակման առաջին օրն իսկ խորանում է 15-16 կիլոմետր՝ հասնում մինչև Սավուր—Մոգիլա—Ստեպանովկա գյուղի շրջանը։

Այսպիսով դիվիզիան պատվով կատարեց Միուս գետի արևմտյան ափին պլացդարմ գրավելու և ընդլայնելու մարտական խնդիրը։

Գերմանացիները չէին կարող հաշտվել այդ դրության հետ։ Սավուր Մոգիլան գեր-

մանական պաշտպանության առավել ամրացված շրջանն էր։ Եվ նրանք այստեղից հաճախակի գրոհների և հակագրոհների էին անցնում մեր հետևակի դեմ, ըստորում օգտագործելով մեծաքանակ հրետանի և տանկեր։

Մի անգամ Ստեղանովկա գյուղի շրջանում գերմանացիները տանկեր նետեցին դիվիզիայի ստորաբաժանումների դեմ։ Մի հատվածում նեղելով մերոնց, հիտլերականները դուրս եկան Կարապետյանի հրամանատարական կետի շրջանը։ Նրանք 150—200 մետրից կրակում էին ուղղակի հրամանատարական կետի վրա։ Ժամապահ երկու կարմիրանակայինները զոհվեցին, անհետ կորչելով թշնամու արկի պայթման հարվածային ուժից։ Կարապետյանի աշքերը ծածկում էր հրետանացին ու ականանետային կատաղի կրակի ժխածանկութը, սահմանափակելով մարտադաշտը դիտելու, մարտավարելու հնարավորությունը։ Այնպիսի իրադրություն ստեղծվեց, որ միայն հրամանատարի անձնական քաջության օրի-

նակը կարող էր վճռական բեկում առաջաց-
նել: Կարապետյանը, շնայած մարտակուն
ընկերների թախանձանքին, հրամանատա-
րական կետումն էր մինչև վերջ և շարունա-
կում էր ղեկավարել մարտը: Նա կոնկրետ
խնդիրներ էր տալիս իր հրետանավորներին
ու ականաձիգներին և, անձամբ հետևակի
գլուխն անցնելով, ետ մղում հիտլերական-
ներին իրենց ելման բնագծերը, ամուր
կանգնելով պաշտպանական սեփական դիր-
քերում:

Բանակի և ռազմաճակատի շտաբում
անհավատալի էր թվում հակառակորդի գե-
րակշիռ ուժերի ճնշումը դիմագրավելու այս
դեպքը: Պատահական չէր, որ նրանք հա-
տուկ սուրհանդակ էին ուղարկել տեղում
պարզելու իրադրությունը:

Կրկնակի շքանշանակիր մայոր Տրոֆիմ
Տրոֆիմովիչ Երեմենկոն, Կարապետյանի
արդեն հիշատակված գումարտակներից մե-
կի հրամանատարը՝ իր հիշողություններում
հետևյալն է պատմում այդ մարտի մա-
սին,

— Մենք բոլորս ապշել էինք գնդապեա
տին տեսնելով մարտի ամենավտանգավոր
հատվածում, այնտեղ, ուր հաճախ վաշտի
հրամանատարն անդամ չի լինում։ Ոմանց
թվում էր, թե դա հետևանք է այն բանի, որ
գուցե շտաբում քիչ են սիրում նրան... ի-
րականում այդ բխում էր ստեղծված ծանր
իրադրությունից, ընկեր Ստալինի հրամա-
նը, սովետական ժողովրդի պատգամն ամեն
դնով, սեփական արյան գնով կատարելու,
մեր դիրքերը պաշտպանելու, թշնամուն
զախչախելու խնդրից։ Մենք, որ ականա-
տես էինք մեր գնդապետի այդ անձնազոհ
քաջագործությանը, օրեց-օր ավելի ու ավե-
լի էինք հարգում ու սիրում նրան։ Ես ուկ-
րաինացի եմ և ակամայից գնդապետին ան-
վանում էի «մեր Բատկոն», երբ առիթ էր
լինում նրա մասին խոսել մարտիկների շըր-
ջանում։ Եվ իրավամբ, այժմ բոլորը նրան
անվանում են «մեր Բատկոն»։ Բավական է
ասել, որ հրամանը բխում է Բատկոյից, որ-
պեսզի այն անշեղորեն կատարեն բոլորը։

Սավուր—Մոգիլա—Ստեղանովիկա հատ-

վածում գիշեղիան ամուր պահում էր իր
դիրքերը, երբ օգոստոսի սկզբներին, նոր
հրամանի համաձայն, անցնում է պաշտպա-
նական նոր բնագիծ՝ Խոնովկա բնակավայրի
հատվածը, այստեղից էլ հենց նախապատ-
րանտելու գերմանական պաշտպանության
ճեղքումը Վորոշիլովսկի տակ՝ Դոնբասում:

ԴՈՆԲԱՍԻ ՀԱՄԱՐ ՄՊՎԱԾ ՃԵՂՔԱՄԱՐՏՈՒՄ

Գերմանական հրամանատարությունը
Դոնբասին՝ Սովետական Միության Հա-
րավի ածխամետալուրգիական այդ բազա-
յին, տալիս էր բացառիկ կարևոր նշանա-
կություն: Կարմիր Բանակի հարձակվող զո-
րամասերին կասեցնելու համար այստեղ
ստեղծվել էր երկարատև պաշտպանության
ամրությունների մի ամբողջ սիստեմ՝ ԴՕՏ-
երի, ԴԶՕՏ-ների, տեղանքին գերիշող
դիրքերի հենակետային կառուցվածքներով:

Ստալինգրադի ճակատամարտի բովութեան անցած, Հայրենական պատերազմի հարուստ փորձը կուտակած մարտիկների և հրամանատարների համար, սակայն, անհաղթահարելի ամրոցներ չկային։ Միուս գետի բնագծում գերմանական պաշտպանությունը կրծելու և ընկճելու մեջ վարպետացած Կարապետյանի ստորաբաժանումները Վորոշիլովսկի տակ իրենց նոր բնագծում պաշտպանական ակտիվ մարտերում հյուծում էին թշնամուն։ Դրան զուգընթաց նրանք կատարելագործում էին իրենց մարտական պատրաստականությունը, սովորում վարպետորեն գրոհել գերմանական պաշտպանության հենակետերը։

Կարապետյանը նախապատրաստվում էր գրոհելու Վորոշիլովսկի շախտի մոտ 207,5 ամրացված բարձունքը։ Հետախուզության տվյալների հիման վրա, նրա անմիջական դեկավարությամբ դիվիզիայի թիկունքում սարքավորվել էր նույնանման մի բարձունք։ Մայոր Երեմենկոյի գումարտակը վեց օր անընդհատ վարժություններ էր կատարում

«Հակառակորդից» այդ բարձունքը «խլելհա
չամար, քանի որ մի քանի գրոհներ անցել
էին անհաջող:

Մայոր Երեմենկոյի գումարտակին վի-
ճակվեց գրոհել այդ բարձունքը ուժային
հետախուզության առաջադրանքով։ Վարժու-
թյուններն ու օպերատիվ ղեկավարությունն
անմիջապես տվին իրենց արդյունքը։ Ուժա-
յին հետախուզության դուրս եկած գումար-
տակն առաջին օրն իսկ գրոհով, համարյա
առանց կռստի, գրավեց ամրացված այդ
բարձունքը, Իլլերի գյուղի շրջանում վեց
կիլոմետր խրվելով գերմանական պաշտպա-
նության խորքը։ Դա միանգամից խախտեց
Հակառակորդի պաշտպանություն սիստեմը,
քայլայելով նրա կրակային վերահսկողու-
թյան ամբողջականությունը։

Բարձր հրամանատարությունը հաշվի էր
առնում այդ հանգամանքը և գումարտակի,
ապա գնդերի առաջացրած ճեղքվածքի մեջ
նետեց ևս երկու դիվիզիա։ Դրանով մի
բարձունքի համար մղված մասնակի մար-
տը կամ, ինչպես ասում են ուղմական

լեզվով, աեղական նշանակություն ունեցող մարտը, վեր ածվեց Հարտվային ամբողջ ռազմաճակատի հարձակման, որը և ավարտվեց Սովետական Դոնբասի ազատագրմամբ գերմանական զավթիչներից:

Ուժային հետախուզությանը հաջորդող հարձակման առաջին օրն իսկ, 1943 թվի սեպտեմբերի 2-ին, դիվիզիան արդեն ազատագրում է Դոնբասի տասնյակ խոշոր բնակավայրեր և Վորոշիլովսկ, Փարիզի Կոմունա, Զերժինսկ քաղաքները:

Անօրինակ էր Կարապետյանի մարտիկների հարձակողական ավյունը: Ոչ հոգնածությունը, ոչ վիրավորվելը, առիթ չէին որևէ կերպ հեռանալու մարտի դաշտից՝ թշնամուն հասցվող վրիժառու, վճռական հարվածների այս պահին:

Գերմանական ատելի զավթիչների, դեմ կիզող ատելությամբ լցված, սովետական ռազմիկների վրիժառությունն է՛լ ավելի բորբոքվեց, երբ նրանք Զերժինսկում ականատես եղան հիտլերյան մարդակերների կատարած գազանություններին: Հիտլերա-

կաններն այստեղ սեպտեմբերի 2-ին գես-
տապոյի շենքի բակն էին հավաքել սովե-
տական հարյուրավոր խաղաղ բնակիչների,
նրանց հարկադրել էին փորել մի հսկայա-
կան փոս։ Այնուհետև հավաքվածների վրա
բենզին էին ցանել, ողջ-ողջ այրել ու թաղել
այդ փոսում։

Կարմիր Բանակի աղատարար զորամաշ-
սերի գալստով, աղատագրված մարդիկ նո-
րից փորում, գտնում, ճանաշում են տան-
ջամահ արված իրենց հարազատներին։

Կիսածխացած դիակների մեջ է Վորո-
շիլովի անվան գործարանի շքանշանակիր՝
մերենավարի կին. Եվգրաֆիա Վասիլինա-
Խարիտոնովան, հին բոլշևիկ, 60-ամյա ծե-
րունի իվան Պետրովիչ Կովալյովը, Գոլովի-
նովկա գյուղի պահակ, 70-ամյա ծերունի
Վլաս Յադենիշ Կոռնիկենկոն, Վորոշիլովի
անվան գործարանի բանվորուհիներ-կոմի-
սիտուհիներ՝ նատաշա Իգնատիևան ու Եվ-
դոկիա Վալոշինան. և այսպես ավելի բան
80 դիակ։

Մասսայական միտինգ է աղատագրված

քաղաքում։ Քաղաքային հրապարակը լցրել
է սովետական ազատագրված քաղաքացինե-
րի 3000-անոց բազմությունը։ Նրանք իրենց
խորին շնորհակալությունն են հայտնում ա-
զատարար Կարմիր Բանակին, մեծ դորա-
վար ընկեր Ստալինին։

Այստեղ է նաև Կարապետյանը։ Նրա
սիրտը լցրել է հաղթող ռազմիկ-հրամանա-
տարի հպարտության անարատ զգացումը։
Բայց այդ զգացումն ալեկոծում է այրող
վրեժը գերմանական մարդագալերի դեմ։
Մինչ այդ մարտերի, բուռն առօրյայում
թաղված, կարծես մոռացված կայձերը բոր-
բոքվեցին նաև նրա սրտում։ Ժողովրդի հետ
այս հուզիչ հանդիպումը նորոգեց նրա սե-
փական անձնական վշտերը։ Զէ՞ որ այդ
նույն գերման իմպերիալիստների ու նրանց
պնակալեզների — դաշնակների ազգադավ-
քաղաքականության զոհ գնացին նրա հա-
րազատները։ Ապա սիրելի Բելան։ Նրա միակ
դուստրն ու զուրգուրանքի առարկան։ Զէ՞
որ նորաբաց կոկոնը խամրեց այդ նույն
հրեշների սկսած պատերազմի արհավիր-

քում, զոհ գնալով Բրեստից — ճակատամերձ գոտուց Էլվակուացման դժվարություններին ու զրկանքներին:

Մարտիկները խոնարհում են իրենց գըլուխները սովետական անմեղ մարդկանց — ծերումիների, կանանց, ջաջել աղջիկների դիակների առաջ և անողոք վրեժի երդում են տալիս: Նաև իր մարտիկների հետ միասին, եղբայրական թարմ գերեզմանի առջև երդում է տալիս կատարել սովետական մեծ ժողովրդի, հայ ժողովրդի նակազը՝ մինչև վերջին օկուպանտը քշել Սովետական Երկրի սահմաններից:

Սակայն թշնամին կատաղորեն կառչում էր Դոնբասին: Պաշտպանական միջակաբնագծերում նա փորձում էր կասեցնել մեր զորքերի հաղթական առաջխաղացումը: Այստեղ ևս Կարապետյանը հանդես բերեց մարտավարման իր հմտությունը: Մեզ արդեն ծանոթ Ն: զնդի հրամանատար, զնդապետ Պերեղրիենկոն իր հուշերում պատմում է հետևյալ հետաքրքիր ու բնորոշ էպիզոդը:

«Օրեխովոյի դեպքը», — այսպէս ենք
մենք այժմ վերհիշում այն։ Դժվարին մո-
մենտ էր, որ իմ զորամասի համար ստեղծ-
վեց Դոնբասում մեր զորքերի հարձակման
օրերին։

Օրեխովո խոշոր բնակավայրի շրջանում
իմ զորամասի մարտական խնդիրն էր գրա-
վել շրջանային կենտրոն Նովո-Իվանով-
կան։ Իմ ձախ հարևաններն էին մեր դիվի-
զիայի և գումդը և Նիդիվիզիայի զորամա-
սերը։ Վերջիններս շեղվելով իրենց մարշ-
րուտից, մեզ հետ միասին մտան Օրեխովո
բնակավայրը։ Պարզվեց, որ հակառակորդը
թողել-քաշվել էր Օրեխովոյից։ Այս հանգա-
մանքը մեր մեջ կասկած առաջ բերեց թշ-
նամու խորամանկ մտադրության մասին։
Փաստորեն նա Օրեխովոն թողել էր մեր զո-
րամասերի համար ծուղակ սարքելու նպա-
տակով։

Իրադրությունը պարզելուց հետո, հա-
րևան դիվիզիայի գնդերից մեկը իր նախ-
նական մարշրուտը շարունակելու համար
պետք է շարժվեր խիստ դեպի հարավ կամ

Հարավ-արևելք, իսկ մենք շարունակում
էինք առաջ շարժվել խիստ դեպի արևմուտք:
Մումինացիներն ամրացել էին Օրեխովոյից
հարավ գտնվող Դաշա գյուղում։ Այստեղից
էլ տանկերի ու մոտոհետևակի ուժերով,
հրետանային կարճատև նախապատրաստու-
թյունից հետո, նրանք հակազրո՞ջի անցան
հարևան դիվիզիայի զորամասերի դեմ և
նրանց ետ մղեցին մեր թիկունքը։ Ես հար-
կադրված էի իմ զորամասը շրջել դեպի ա-
րևելք և բռնել շրջանակի պաշտպանություն։
Այդպես էլ արեցի։ Մեր հրետանու ձնշման
տակ հակառակորդը նորից թողեց Օրեխո-
վոն և ծածկվեց հորիզոնում։ Բարդ իրադրու-
թյուն էր։ Պարզ չէին ոչ հակառակորդի ու-
ժերը, ոչ նրա դասավորությունը։ Փաստն
այն էր, որ նա գործում էր իմ թիկունքում՝
ձախ թերից։ Այդ բոլորին ավելացավ և այն,
որ կապ չկար դիվիզիայի շտաբի հետ։

Գիշերվա ժամը 12-ն է։ Գնդի շտաբա-
յիններս քննարկում ենք ստեղծված իրա-
դրությունը։ Մեզ սպառնում է ստույգ շրջա-
պատման վտանգը։ Եվ ահա, որտեղից որ-

տեղ երևաց Կարապետյանը։ Բոլորը միանգամից աշխուժացան։ «Նրա հետ չես կորչի», — ասում էին տղաները։ Եվ իրոք Կարապետյանը կողմնորոշեց բոլորիս։ Նա խնդիր տվեց Հարձակվել Նովո-Պավլովկայի վրա՝ միաժամանակ աջակցելով Հարևան գնդին։ Այդ որոշումը բխում էր նրանից, որ մենք այդպիսով միանում էինք մեր հիմնական ուժերին, չեզոքացնում շրջապատման վտանգը և Հնարավորություն ձեռք բերում շարունակելու ընդհանուր հարձակումը։

Այսպես էր Կարապետյանը մեզ օգնում մարտի դժվարին ու բարդ մոմենտներին, երևալով այնտեղ և այն ժամանակ, երբ օդի ու ջրի պես զգում էին նրա կարիքը։ Հրամանատարի նրա հատկանշական գիծն այն է, որ նա ոչ միայն հրամայում է, այլև պարզաբանում, ցույց տալիս ու սովորեցնում, թե ինչպես կատարել առաջադրված մարտական խնդիրը։ Նրա հայտնվելը նման բարդ պայմաններում ուներ և բարոյական նշանակություն՝ բոլորին ոգի ներշնչելու իմաստով, և հայտնի «ճնշում՝ էր վերևից»։

Ճնշում առանց ճնշման, եթե կարելի է այս
պես արտահայտվել, որն ապահովում էր
մեր մարտական հաջողությունը»:

Այս շրջանի մարտերից մարտական ըն-
կերները հիշում են Տարասովկայի համար
մղված մարտը:

Տարասովկան գերմանական պաշտպա-
նության կարևոր հենակետն էր Զապլինո-
հանգուցակայարանի մատուցներում։ Մեր
հետախուզության տվյալներով, շուրջ 500
տուն ունեցող այս ստանիցայում գերմա-
նացիները կենարոնացրել էին զգալի ուժեր՝
մոտ 20 տանկ, 10 զրահամեքենա, 8 հրա-
նոթ և մոտ 100 ավտոմեքենա՝ մոտոհե-
տևակով։ Հրետանային կարճատև նախա-
պատրաստությունից հետո գնդապետ Պե-
րեդրինկոյի գունդը հարձակման անցավ
Տարասովկայի վրա։ Գումարտակներից մե-
կը հակառակորդին կաշկանդում էր ճակա-
տից, իսկ մյուս երկու գումարտակները աջ
ու ձախից թևանցելու էին հակառակորդին՝
փոխգործակցելով աջից հարևան մայոր
Երեմենկոյի գումարտակի հետ։

Սակայն թշնամին իր մասսայական տեղատարափ կբտնին սեղմեց Երեմենկոյի գումարտակին, զրկելով նրան հարձակման հաջողությանը նպաստելու հնարավորությունից։ Մյուս կողմից Երեմենկոյի գումարտակի անգործության մատնվելուց օգտվելով, հակառակորդն իր կրակի ամբողջ ուժը փոխադրում էր Պերեղրիենկոյի գնդի աջ թևի ու կենտրոնի վրա։ Եվ, չնայած նրան, որ Պերեղրիենկոյի ճախթեյան գումարտակն իր ճախ թևով արդեն ներխուժել էր Տարասովկա, հարկադրված էր ետքաշվել՝ յուրայիններից աջակցություն շգտնելու, հակառակորդի կատաղի դիմադրությունը ճնշելու հնարավորություն շունենալու պատճառով։

Հրամանատարներին դիտակետից մարտի ընթացքին հետևող Կարապետյանը շերկարող հանդուրժել նման դրություն։ Որպես բանիմաց Հրամանատար, նա քաջ հասկանում էր, որ Երեմենկոյի գումարտակի փաստական անգործությունը ճախողում է մարտական խնդրի կատարումը, իսախտելով հարձակման տակտիկական ամբողջականու-

թյունը։ Հարիկավոր էր, ինչ գնով ուղամ է լինի գումարտակը դուրս բերել թշնամու կրակի տակից և վճռական մարտի նետել նրան։ Դա կփրկեր և՛ գումարտակին, և՛ ամբողջ գորամասին։ Կարապետյանն անտառան ինքն է վճռում կատարել այդ խնդիրը։

Մայոր Երեմենկոյի զարմանքը չափ ուսահման չուներ, երբ թշնամու տեղատարափ կրակի տակ արագընթաց քշելով իր ձին, գումարտակի մարտակարգերում հայտնվեց Կարապետյանը։

— Հը՞, ի՞նչ եք պառկել այստեղ, պառկելով չենք հաղթի թշնամուն, — հանդիմանական տոնով նա դիմեց Երեմենկոյին։

Մարտակարգի շղթայով բերնի-բերան անցավ «Բատկոյի» երեալու լուրը։ Բոլորն զգաստացան, նոր ոգի առան, կայտառացան։ Քիչ անց նրանք իրար էին փոխանցում «Բատկոյի» հրամանը՝ կարմիր հրթիռի պղղանջանով՝ միահամուռ գրոհի ելնել, մասսայական կրակ վարելով հրացաններից, ավտոմատներից, դնդացիրներից։

— Պառկելը մահ է Հարձակվողի համար, զգուշացնում է «Բատկոն», — կրկնում էին բոլորը:

Մինչ կարմիր հրթիռը իր կորագիծն էր գծում երկնակամարում, «Իմ ետևից, հանուն Ստալինի, հանուն Հայրենիքի», — գոշելով, մարտակարգի առջևից երևաց Կարապետյանը:

Մարտիկները մի մարդու պես գրոհի նետվեցին թշնամու վրա, արճիճի կարկուտ տեղալով նրա գլխին:

Այսպես վերցվեց Տարասովկան: Դիվիզիան այստեղ վերցրեց հսկայական ռազմական ավար և գերիներ:

Հարձակման սրբնթացությունն արդահովելու համար Կարապետյանը կտղմակերպել էր հրետանիով և կրակային այլ միջոցներով ուժեղացված հետապնդող շարժուն ջոկատներ, որոնք մշտապես իրենց խորտակիչ հարվածի տակ էին վերցնում նահանջելով ջախջախումից խուսափել ձգողող թշնամուն: Հետապնդող շարժուն ջոկատների հետքերով օր ու գիշեր մերթ մարտերով,

մերթ անկաշեղանդ առաջ էր ընթանում Հետևակը, օրական կտրելով 40—60 կիլոմետր ճանապարհ։

Հետապնդելով թշնամուն, դիվիզիայի գորամասերը Տարասովկայից հասան մինչև Զապլինո։ Այստեղ գերմանացիներն ունեին ուժեղ պաշտպանություն, «Ֆերդինանտ» ինքնագնաց հրանոթներ, զրահագնացք և ավտոմատային այլ զենք։ Նրանք հատկապես ուժեղ կրակի տակ էին պահում Զապլինոյի մերձակա մատուցներում գտնվող ջրային բնագիծը, որն անցնելուն պես մեր զորքերը անկման անմիջական վտանգի տակ կդնեին Զապլինոն։

Հակառակորդի հրետանա-ականանետային ու գնդացրային ուժեղ կրակի տակ Կարապետյանն անմիջականորեն ղեկավարում էր ստորաբաժանումների գետանցումը, երբ մոտիկ պայթած հրետանային արկի բեկորից վիրավորվեց գլխից՝ աշ աշքի հոնքի վերնամասից։ Ուշադիր աշքը այժմ էլ կնկատի Հերոսի վերքերի սպին։

Բոգոդուխովյի նշանավոր մարտից Հե-

տո, ուր վիրավորվել էր նա աջ ազդրից,
սա նրա երկրորդ ծանր վերքն էր: Բայց նա
երբեք չէր լքել մարտի դաշտը և այս անգամ
էլ դաշտային վիրահատությունից հետո՝
գլուխն ու աշքը վիրակապած, նա շարունա-
կեց ղեկավարել ստորաբաժանումները:

Մարտիկներն ու հրամանատարները
պարծանքով ու հպարտությամբ էին խոսում
գնդապետի այդ քաջարի վարմունքի մասին:
Նրա օրինակը ոգևորում էր բոլորին: Նրա
վրեժը լուծելու վճռականությամբ մարտի
էին գնում նրանք՝ ատելի թշնամու դեմ:
Գետն առաջինն անցան մայոր Երեմենկոյի
առաջապահ գումարտակի մարտիկները, եր-
թից էլ գրոհի նետվեցին Զապլինոյում ծը-
վարած թշնամու վրա՝ սիրելի «Քատկոյի»
վրեժը սրտներում: Վեցժամյա կատաղի գո-
տեմարտից հետո Զապլինոն վերցվեց:

Զախցախված թշնամին Զապլինոյում թո-
ղեց ինքնագնաց 4 «Ֆերդինանտ» հրանոթ,
զրահագնացքը, հացահատիկ ու դեղորայք
բարձած մի մեծ էշելոն և այն:

Այսպես դիվիզիան իր հարձակման ճա-

նապարհին կոտրելով թշնամու դիմադրությունը և ընկճելով նրա պաշտպանության միջակա բնագծերը, հաղթական մարտերում կենդանի ուժի և տեխնիկայի մեծ կորուստներ պատճառելով նրան, ազատագրեց Ռոպովկան, Կրասնոարմեյսկոյեն, Տարասովկան, Գրիգորեկան, Երկաթուղային խոշոր կայարան Տեմուրինոն, Պրասյանայան, խոշոր հանգուցակայարան Զապլինոն, Պոկրովսկոյեն, Գուլյայ Պոլեն, Օրեխովոն, Բոլշոյ Տոկմակը, տասնյակ այլ բնակավայրեր և իջավ դեպի հարավ Մոլոչնոյե գետի բընագիծը՝ Մելիտոպոլի տակ:

Դոնբասի համար մղած մարտերում դիմիգիայի ստորաբաժանումները ոչնչացրին թշնամու 20 հրանոթ, մեկ տանկետկա, ավելի քան 60 ծանր ու թեթև գնդացիր, 4 ականանետ, 4 տրակտոր, 1 շոգեքարշ, երկաթուղային 37 պլատֆորմ ու 10 վագոն, 2 պահեստ ու զմամթերքով՝ և շատ այլ սպառագինություն — հրացաններ, ավտոմատներ, ավտոմեքենաներ, մոտոցիկլետ, սայլեր; Ստորաբաժանումներն իրենց մարտա-

կան հաշվում նշում են գերմանական ավելի քան 1000 զինվոր և սպա սպանված և մոտ 100 զինվոր և սպա գերի: Վերցված ուղղմական ավարի մեջ է 6 թնդանոթ, 5 տանկ, 1 ականանետ, տասնյակ ծանր ու թեթև գնդացիրներ, ձրացան և ավտոմատ:

Դոնբասի համար մղված ճակատամարտում հրամանատարության մարտական առաջադրանքներն օրինակելիորեն կատարելու և ցուցաբերած խիզախության ու արիության համար դիվիզիայի մարտիկներից ու հրամանատարներից ավելի քան 600 հոգի արժանացան կառավարական բարձր պարզեների:

ՄԵԼԻՏՈՊՈԼՅԱՆ ՃԱԿԱՏԱՄԱՐՏԸ

Դոնբասը կորցնելուց հետո գերմանական հրամանատարության ավանտյուրիստական պլաններում սկսեց բացառիկ տեղ գրավել Մելիտոպոլյան պլացդարմը: Հիտլերյան վայուազմագետները Մելիտոպոլյան պլացդարմից հենց մտադիր էին հասցնել իրենց

Հարվածը՝ մեր Հարավային ուղղաճակատի
զորքերի թիկունքը դուրս գալու և առնվազն
կորցրածը ետ վերադարձնելու նպատակով։
Մանավանդ որ սովետա-գերմանական ուղ-
աճակատի հենց այս հատվածում գերմա-
նական դիրքերն առավել առաջ էին ձգված
դեպի արևելք։

Մյուս կողմից վախ կրելով Դնեպրի բը-
նագծում հուսալի ամրություններ ստեղծե-
լուց, գերմանական հրամանատարությունը
կատաղորեն կառչում էր մեծ գետի ստորին
հոսանքին և այստեղ հասցված յուրաքան-
չչուր հարվածը հիվանդագին անդրադառ-
նում էր գերմանական զորքերի դրության
վրա ամբողջ Ռւկրաինայում։ Այդ էր պատ-
ճառը, որ օգտագործելով Մոլոչնոյե գետի
բնագիծը, գետ, որ կտրում անցնում է Զա-
պորժյան տափաստանը հյուսիսից հա-
րավ, Մելիտոպոլի շրջակայքում ընկած մեծ
ու փոքր բլուրները, գերմանացիներն ստեղ-
ծել էին երկարատև պաշտպանության էշե-
լոնավորված մի սիստեմ, որը հյուսիսից
հասնում էր մինչև Դնեպրի ոլորտնը, հա-

բավում՝ հարակցում ծովին։ Այսպես, ճաշ
կատից մեր զորքերին խոշընդուռում էր
Մոլոշնոյե ոչ լայն, ոլորապտույտ գետը՝ իր
դիք աջ ափով, կտրտված ձորերով ու ձո-
րակներով և ճահճային ձախ ափով, իսկ
փորված հակատանկային երեք փոսերը
լցվել էին ջրով։

Խրամատային էշելոնավորման առանձ-
նահատկություններից մեկն տյստեղ այն էր,
որ պաշտպանության առաջին գոտում շախ-
մատաձև դասավորված «մեռյալ խրամատ-
ներ» էին փորվել։ «Մեռյալ խրամատը»
դա մեկ զինվորի համար փորված խրա-
մատն է (պունկերյան խրամատ), որը ի
հակադրություն խրամատային պաշտպանու-
թյան գերմանական սիրված կառուցումնե-
րին՝ հաղորդակցման անցուղիներով ու մեր-
ձեցման պուլաներով, ոչ մի ելք չունի։ Սա
նշանակում էր, որ այդ խրամատում նստած
գերմանական զինվորը պետք է մեռներ,
բայց ոչ մի քայլ ետ շնահանջեր։ Բառացիո-
րեն այսպես էլ ասվում էր գերմանական
հրամանատարության Հիտլերից բխած

Հրամանում։ Գերմանական յուրաքանչյուր
սպայի վրա պարտականություն էր դրված՝
գնդակահարելով միայն դիրքերից փախուստ
տվողներին, այլև նույնիսկ տատանվողնե-
րին։ Հատումը հրահանգի համաձայն այստեղ
մտցվել էր «խրամատային ծառայության
սպայի» նոր պաշտոն։ Այս սպայի պարտա-
կանությունն էր հսկողությունը ստորաբա-
ժանման մշտական մարտական պահպա-
նության և նրա դիրքերի անվտանգության
վրա։ Գերմանական զինվորները սրանց
անվանում էին «նահանջի սպաներ»։ Բացի
այդ, մարտակարգերի ետևում զերմանացի-
ները նստեցրել էին էսէսական ուժեղացրած
արգելափակիչ ջոկատներ, որոնք պատրաստ
էին անխնա կրակ տեղալու նահանջող յու-
րայինների վրա։

Մելիտոպոլյան պլացդարմը, նրա ում-
բությունները գերմանացիները կոչում էին
«Դրիմի արևելյան դարպասները»։ Այս պը-
լացդարմն առաջակալում էր ամբողջ ստո-
րին Դնեպրը և Մելիտոպոլ—Կախովկա շրջանը, մերձծովյան ամբողջ հարթավայրը,

Դրիմի մատուցները։ Եվ այն պաշտպանելու համար գերմանական հրամանատարությունը այստեղ էր կենտրոնացրել Գոնբասում գզգզված իր դիվիզիաների մնացորդները, դրանք համալրելով զանազան մասնագիտական ռեզերվային գումարտակներից (հետախուզական, սակրային, կամրջաշինական և այլն)։ Միաժամանակ տեսնդադին կերպով թամանից ու Դրիմից մինչև Զանկոյ երկաթգծով, ապա արագացրած երթով, նույնիսկ ինքնաթիռներով, Մելիտոպոլ էին շպրտվում Հյուսիսային Կովկասյան ուղղմանակատի հարվածներից պրծած գերմանական զինվորները։

Մելիտոպոլ քաղաքը քարաշեն, զանգվածային տներով, խողագ փողոցների, խով նրբանցքների ու փարթամ այգիների քաղաք է։ Քաղաքի Մոլոչնոյե գետին հարող հարավ-արևելյան մասը գտնվում է ցածր հարթավայրում, իսկ Հյուսիսային և արևմտյան մասը՝ բարձրավանդակում։ Իս բընական առավելություն էր տալիս պաշտպանվողների համար։ Միաժամանակ գեր-

մանացիները պաշտպանության հենակետերի էին վերածել քաղաքի յուրաքանչյուր տունը, փողոցը, այգին, տների ներքնահարկերը։ Անընդհատ մահացու կրակի տակ էին պահում մերձեցման բոլոր ուղիներն ու մատուցները։ Մեր հետախուզության արվածական գերմանական հրամանատարությունն այստեղ քառապատկել էր ավիացիան։ Մեր զորքերի կողմից գերմանական պաշտպանությունը ճեղքելու օրը միայն գերմանական ավիացիան մեր դիրքերի վրա կատարեց 1100 ինքնաթիռ-թոխք 10—15 կիլոմետր երկարությամբ ճակատում։ Սակայն թշնամին ոչ օդում և ոչ էլ ջամաքում գերակշռության շհասավ։ Սովետական տանկիստները, օդաշուներն ու հետեակայինները նրան մարտերի դրավեցին դեռ պաշտպանության նախաղաշում։ Արյունալի զոտեմարտեր բռնկվեցին գերմանական պաշտպանության ուժեղ հենակետեր Կոնստանտինովկա, Վոզնեսենկա բնակավայրերի համար։ Մեր զորքերը ետ մզեցին հակառակորդի 26 կատաղի հակագրուհները, նրան

պատճառելով կենդանի ուժի ու տեխնիկայի
մեծ կորուստներ։ Մարտերի ամբողջ այս
շրջանը դարձավ գերմանական զորքերին,
նրանց տեխնիկան աղալու, արյունաքամ ա-
նելու մի շրջան։

Կարապետյանի դիմիզիան 1943 թվի
հոկտեմբերի 12-ի առավոտյան լուսադեմին՝
35 կիլոմետրանոց գիշերային երթով հասավ
Մելիտոպոլ։

Ծավալված քաղաքական-մռասսայական
աշխատանքն զգալ էր տալիս իր արդյունքը։
Մարտիկներն ու հրամանատարները խորա-
պես գիտակցում էին իրենց պատասխանա-
տվությունը Հայրենիքի հանդեպ և քաջ գի-
տեին մարտական խնդիրը։ «Ազատագրել
Մելիտոպոլը, դուրս գալ Պերեկոպ և Ղրիմը
նոր Խտալինգրադ դարձնել գերմանացիների
համար», — այս նշանաբանն էր ոգևորում
ու մարտական լիցք տալիս բոլորին։

Առաջավոր շատ մարտիկներ ու հրամա-
նատարներ դիմումներ էին տալիս բոլշևիկ-
ների պարտիայի և կոմերիտմիության շար-
քերն ընդունվելու համար։ Հուզիչ այդ դի-

ձումներում նրանք խնդրում էին, որ եթե
իրենց վիճակի զոհվել մեր մեծ Հայրենիքի
ազատության համար մղվող կովում, ուղա
իրենց համարել բոլշևիկների պարտիայի
անդամ-կոմունիստ:

Այս օրերին միայն պարտիայի մեջ, որ-
պես անդամ ընդունվեցին 56 հոգի, որպես
թեկնածու՝ 157 հոգի, կոմերիտմիության
մեջ՝ 95 հոգի:

Եռուն նախապատրաստական աշխա-
տանք էր ծավալվում գետն անցնելու, անմի-
ջապես փողոցային մարտերում թշնամուն
ջախջախելու համար: Կազմակերպված գրո-
հիշ ջոկատները նորից ու նորից վարժադաշ-
տերում կրկնում, կատարելագործում էին ի-
րենց մարզվածությունը, ուսուցումը: Հրա-
մանատարներն ստուգում էին ստորաբաժա-
նումների և ստորադրյալների մարտական
պատրաստականության վիճակը, ճշդրում
վերջին մանրամասները:

Կարապետյանը դեռ վիրակտակերի մեջ
էր և վերքերն իրենց զգալ էին տալիս: Բայց
ուղմիկի նրա բնավորությանը խորթ էր
00

մարտական այս առօրյա եռուն կյանքից
կտրվելը։ Նա անընդհատ գնդերումն էր և
անմիջականորեն ղեկավարում էր Հարձակ-
ման նախապատրաստությունը։

Դիվիզիայի շտաբի պետ, եռակի շքա-
նշանակիր գնդապետ Ռոման Եվոենիչ Ռա-
պոպորուր իր հուշերում հետևյալն է պատ-
մում այդ օրերի մասին։

— «Մելիտոպոլը գրոհելու նոխօրյակին
գնդապետը գնդերից վերադարձավ Հոգնած
և ուժասպառ։ Գիշերը հրաման ստացվեց
մոտենալ Մոլոչնոյե գետին՝ Մելիտոպոլը
գրոհելու համար։ Ես խնդրեցի, որ գնդապե-
տը հանգստանա, չգա դիտակետ։

— Մարտ է սկսվում, ես լավ եմ զգում
ինձ, — ասաց նա՝ իմ թախտնձանքին ի
պատասխան և նստելով իր «Յպելը», շարժ-
վեց դեպի Մոլոչնոյե գետը, որն արդեն
բռնանցում էր մեր գնդերից մեկը։ Ես հե-
ռախոսեցի գնդի հրամանատարին, որպեսզի
իմանամ գնդապետի առողջության վիճակը։
Եսկ գնդի հրամանատարը հայտնեց, թե
«գնդապետն ինձ մոտ չէ»։ Հետագայում

պարզվեց, որ նա գտնվում է առաջին գումարտակներից մեկում, որի հետ անցել էր Մոլոշնոյեն և պլացդարմ գրավել դետի աջ ափին՝ այդիներում և գնդի շտաբի փոխարքն նա գնացել էր գետն առաջինն անցնող գումարտակը և քանի դեռ Մելիտոպոլը չդրավվեց, նա չերևաց դիվիզիայի շտաբում։ Նրա հետ ես անձնական կապ էի պահպանում իմ օգնականներից մեկի միջոցով։

Այս դեպքը ինձ հիշեցնում է այն, ինչ որ մեծ շտարներում կոշվում է ԲՊՍ (Временное полевое управление—դաշտային ժամանակավոր զեկավարություն): Կարապետյանը կարծիս դիվիզիայի ԲՊՍ-ի պետն էր, որը երկու գնդերի գլուխն անցած, անընդհատ նրանց առաջ էր մզում, արյունավոր մարտերով գրավելով թաղամաս թաղամասի ետևից։

Դիվիզիայի հիմնական խնդիրն էր՝ գործելով 91-րդ հրաձկային դիվիզիայի ձախ թևում, հարձակվել երկաթգծի և խճուղային հանապարհի ուղղությամբ ամրացված երկու բարձունքների վրա՝ Մելիտոպոլ քաղաքից

Երկու կիլոմետր դեպի արևմուտք և հարմանների հետ փոխգործողությամբ, ջախջախել հակառակորդի Մելիտոպոլյան խմբավորումը, ըստորում հատուկ ուշադրություն դարձնելով իր ձախ թևի ապահովմանը և Նովո-Նիկոլաևկայի կողմից հակառակորդի հակագրուները ետ մղելուն։ Մերձավորագույն խնդիրն էր երկաթգծի գրավումը, խըճուղուն տիրելը։

Չնայած իր վիրակապերին, Մոլոչնոյե գետի ափին Կարապետյանի երեալը, ինչպես միշտ, այս անգամ էլ, հերոսական սխրագործության նոր մղում տվեց մարտիկներին ու հրամանատարներին։ Մարդիկ գործում էին առյուծների պես, արհամարհելով բնության տարերքն ու մահվան վտանգը։

Մոլոչնոյեն այստեղ ծանծաղ է, բայց տեղ-տեղ համարյա մարդահասակ խորությամբ։ Քաջարի հրետանավորներն ու սկանածիդները մինչև կեռ մեջքը զրի մեջ բառացիորեն իրենց ձեռների վրա քարշ էին տալիս հրանոթներն ու ականանետերը դեպի աջ ափը. հետևակայինները պլաշ-վրան-

ներով փաթաթած իրենց հրացաններն ու
ավտոմատները դլխավերեռում բռնած, անց-
նում էին գետի հոսանքուով և անմիջապես
դիրքեր բռնում մարտի համար:

Կարապետյանի տակտիկան մտա-
հղացումն այն էր, որ զնդերից ձեկով (ոհ-
զերվ) կաշկանդի քաղաքի հարավուին
կենտրոնում ուժեղ դիմադրություն ցուց
տվող թշնամու ուժերը, իսկ մյուս երկու
զնդերով մաներելով, դուրս գալ դեպի քաղա-
քի հյուսիս-արևմտյան ծայրամասը: Դրա-
նով հակառակորդի՝ քաղաքի՝ կենտրոնում
ունեցած ուժերն անջատվում էին արևմույան
մասի ուժերից: Դա փաստորեն մի պարկ
էր, որի մեջ, ի վերջո, ընկան և՛ գերմանա-
կան տանկերը, և՛ հետեակը: Այդ էլ հենց
վճռեց մարտի ելքը Կարապետյանի օդաբին:

Սակայն գեղեցիկ մտահղացումը դեռ քիչ
է մարտական հաջողության համար, այն էլ
Մելիտոպոլի պլացդարմին կատաղորեն կառ-
շող ուժեղ և խորամանկ թշնամու դնմ: Ու-
ժերի բառացիորեն գերմարդկային լարման,
բոլոր մինուսների և պլյուսների ճշգրիտ

Հաշվառման, մարդկանց ու տեխնիկայի խելացի օգտագործման, երկաթե կա՛քի և անհողղորդ վճռականության, անձնական բաջարիությանը զուգորդված ստալինյան դորավարի հմտության հետ, փողոցային դաժան մարտերի ամենաբարդ իրադրության մեջ հմտորեն կողմնորոշվելու նրա ունակությունները վճռեցին մարտի ելքը հօգուտ սովետական զորքերի:

Հայ ժողովրդի պանծալի զավակ գնդակետ Ասքանաղ Կարապետյանը, ստալինյան դպրոցի հասուն զորավարի իր ամբողջ տաղանդը դրսելորեց Մելիտոպոլի ճակատամարտում: 1943 թվի հոկտեմբերի 12-ից մինչև 23-ը մղված փողոցային դաժան գոտեմարտերում նա քայլ առ քայլ ետ մղելով թշնամու հակագրոհները, անընկճելի վճռականությամբ իրականացրեց իր մտահղացումը, պատվով կատարելով զորամասի առաջդրված մարտական խնդիրը:

Հոկտեմբերի 12-ի օրվա վերջին դիմիդիայի գետն անցած ստորաբաժանումները, համառորեն կատարելով իրենց խնդիրը և

ընկճելով թշնամու պաշտպանությունը, տիրեցին Մելիտոպոլ — Դանիլովկա — Իվանովկա խճուղուն, իսկ գնդերից մեկը իր ձախ թևով տիրեց սովխոզի արևմտյան ծայրամասին։ Հակառակորդն անընդհատ հակագրուհների էր դիմում մեկ գումաբտակի և 5—6 տաների աջակցությամբ, բայց բախվում էր մեր մարտիկների կայուն դիմադրությանը և խորտակիչ հարվածներին։

Հոկտեմբերի 13-ին դիվիզիայի ստորաբաժանումները ետ մղեցին գերմանական հետեակի ու տանկերի հինգ հակագրուհները, ըստ որում նրանց պատճառելով մեծ կորուստներ։ Այդ օրը ջարդվեց և այրվեց թշնամու 3 տանկ և ոչնչացվեց գերմանական ավելի քան 350 զինվոր ու սպա։

Հոկտեմբերի 14-ին դիվիզիայի ստորաբաժանումները կատարելով 91-րդ հրաձգացին դիվիզիայի հետ փոխգործողություննեց բխող խնդիրը, մարտական գործողություններ ծավալեցին Մելիտոպոլ քաղաքի հարավ արևմտյան ծայրամասը դուրս գալու ուղղությամբ։ Օրվա վերջին ստորաբաժա-

նումներն արդեն մարտիր էին մղում քաղաքական հարավ-արևմտյան ծայրամասում, Հակառակ որդից մաքրելով փողոց փողոցի ետևից, թաղամաս թաղամասի ետևից:

Լարված, դաժան մարտերը չեին դադարում օր ու գիշեր: Գերմանացիները մարտի մեջ էին նետում մեծաքանակ հրեաններ, տանկեր, ինքնազնաց հրանոթներ:

Հոկտեմբերի 14-ին և 15-ին ստորաբար ժանուարիները ետ մղեցին թշնամական տանկերի և հետևակի ութ հակագրահները: Հակառակորդի հակագրոհող խմբերին աջակցում էին 22-ից մինչև 30 տանկ, այդ թըվում «կագր-6» տիպի ծանր տանկեր և «ֆերդինանտ» ինքնազնաց հրանոթներ: Այս երկու օրվա ընթացքում խփվեց և այրվեց թշնամու 18 տանկ:

Հոկտեմբերի 16-ին և 17-ին դիվիզիան կատարում էր մերձավորագույն ինդիրը՝ դուրս գալ երկաթգծի բնագիծը: Հակառակորդը նորանոր ուժեր էր մաքրուի նետում և ավելի կատաղի դիմադրում: Սակայն մեր ստորաբաժանումները ջարդ ու փշուր անե-

լով Հակառակորդի տեխնիկան և ազալով
նրա կենդանի ուժը, Հոկտեմբերի 18-ի օր-
վա վերջին տիրեցին գեղանացիների
պաշտպանության ուժեղ հենակետ Ն. բար-
ձունքին, իսկ Հոկտեմբերի 19-ին՝ երկրորդ
ուժեղ հենակետ-բարձունքին, դրանով ինկ
ապահովելով դեպի երկաթգծը դուրս գալու
հնարավորությունը:

Հոկտեմբերի 20-ի երեկոյան դեմ մեր
ստորաբաժանումները Հակառակորդից մաք-
րեցին Մելիտոպոլ քաղաքի Հարավ-արև-
մտյան ծայրամասը:

Հոկտեմբերի 21-ի և 22-ի ընթացքում
նրանք մարտեր էին մղում երկաթգծի հա-
մար, ընկճելով գերմանացիների հուսահատ
ու վայրենի դիմադրությունը:

Հոկտեմբերի 22-ի երեկոյան ստորաբա-
ժանումները դուրս եկան դեպի երկաթգծի
ու խճուղու խաչմերուկը, հաստատ կերպով
ամրանալով քաղաքի Հարավ-արևմտյան
մատուցներում՝ նովո-Նիկոլաևկայի և Ռո-
դաշնոյեի ուղղությամբ:

Մինչ այդ սովետական մյուս դորամա-

սերը ևս, պատվով կատարելով գերմանացիների Մելխիտոպոլյան խմբավորումը ջտիցախելու իրենց խնդիրը, դուրս եկան Մելխիտոպոլից դեպի արևմուտք: Այսպիսով հոկտեմբերի 23-ին մեր զորքերը «ամբողջապես տիրեցին Մելխիտոպոլ քաղաքին ու կայարանին, զերմանացիների պաշտպանության կարևորագույն հանգույցին հարավային ուղղությամբ, որը փակում էր դեպի Դրիմ և Դնեպրի ստորին հոսանքը տանող մատուցները» (Գերագույն Գլխավոր Հրամանատար, Սովետական Միության Արտշալ ընկեր Ստալինի հրամանից):

Մելխիտոպոլյան ճակատամարտում մարտիկներն ու հրամանատարները մարտական սխրագործություններով կարծես հաղուրդ էին տալիս իրենց սիրտն այրով վրեժինդիր ատելությանը՝ մեր սրբադան հողը ոտնակոխած գերմանա-ֆաշիստական գովանների դեմ: Ստորաբաժանումների կոմսնետ ու կոմերիտական ռազմիկները միշտ ավանդարդի դերումն էին, և բարձրակայան ջերմ խոսքով ու անձնութաց քաջուղործության

օրինակով ողևորում, իրենց եսևից էին տանում ռազմիկների մասսային:

Վաշտի հրամանատար, պարտիական ընկ: Լոգաշկինը Հոկտեմբերի 20-ին գերմանացիների ուժեղ ամրացված դիրքերի վրա մի բանի անդամ հաջող դրոհի տարրով իր վաշտը: Նա երկու անդամ վիրավորվեց, սակայն մարտի դաշտը Աքեց, մինչև շկատարվեց մարտական առաջադրանքը: Լեյտենանտ Լոգաշկինի վաշտի շարքայիններ հկուսովը, Ժեգալինը, Կուդրյավցևը, Կաբանովը, Տարանցինը առաջինը ներխուժեցին Հակառակորդի խրամատները, նոնակներ շպրտելով հիտլերականների զլիսին, ոչընչացրին նրանց և տիրեցին խրամատներին:

Հոկտեմբերի 18-ին, այն հատվածում, ուր դասավորված էր սերժանտ Կատոնոգովի հակատանկային հրանոթը, երևացին գերմանական 5 տանկ: Կատոնոգովի հրանոթի անձնակազմը շտատանվեց: Խիզախ հրետանավորներն ուղիղ նշանառությամբ վարած կրակով դիպուկ համադարկերով ոշնչացրին թշնամու 3 տանկ և մնացած երկուահին փա-

խուստի մատնեցին։ Գերմանացիները կըրկնեցին իրենց հակադրուհները։ Սակայն Կատոնոգովի անձնակազմը, չնայած նրան, որ մնացել էին երեք հոգով, մինչև վերջն անսասան մնաց իր դիրքերում, ետ մղելով թշնամու բոլոր հակագրուհները։

Հրաձգային վաշտի պարտկազմակերպիչ Կրիկունը մյուս կոմունիստների հետ միտսին գտնվելով մարտական շղթայում՝ 5—6 մարտիկների խմբի մեջ, գերմանացիներից խլեց շավումեքինա, անձամբ սպանեց մի սպայի և գերի վերցրեց 5 հիւլերական։

Կարապետյանն անընդհատ մարտաշարքերումն էր։ Նա մարտիկների և հրամանատարների մոտ հայտնվում էր մարտի ամենալրիտիկական մոմենտներին, ոգեսրում ու վճռական մարտի մղում նրանց։ Նրաներկայությունը շատ բանով վճռում էր մարտի ելքը հօգուտ մեր ստորաբաժնումների։ Հմուտ հրամանատարի իր փորձառությամբ նա կարողանում էր հենց թշնամու քթի տակ այնպիսի դիտակետեր ընտրել իր համար, որտեղից ապահովում էր մարտավարումը։

Շքանշանակիր փոխգնդապետ Մահմուդ
Տաջիկօղլու Կասիմովը պատմում է. «Կա-
րապետյանը մշտապես լինում էր մեր զնդի
հրամանատարական կետում։ Մի անգամ
զերմանացիների ուժեղ հակագրոհի ժամա-
նակ նա նորից հայտնվեց մեզ մոտ։ Գեր-
մանական տանկը 80—100 մետր հեռավո-
րությունից ուղիղ նշանառությամբ կրակում
էր մեր դիտակետի վրա։ Հարկադրված
էինք իշնել շենքի ներքնահարկը։ Երեկոյան
դեմ թշնամին սկսեց հակագրոհներով նեղել
մեր ստորաբաժանումները, հասնելով մին-
չև մեր կրակային դիրքերը։

Երբ ստեղծված դրությանը ծանոթացավ
Կարապետյանը, նու առաջարկեց ուժերի վե-
րախմբավորում կատարել և պատրաստվել
գիշերային դրոհի։ Գիշերով էլ նու գումար-
տակները գրոհի հանեց։ Դրա շնորհիվ դեռ
գիշերը վերականգնեցինք մեր նախկին դրու-
թյունը, իսկ առավոտյան մարտաշարքերի
առաջն ընկած՝ «Հանուն Հայրենիքի, հանուն
Ստալինի» գոշելով, նա հարձակման տարավ
բոլորիս։

Հակառակորդը նոր ուժեր նետեց մեր
ղեմ: Մեր աջ թևում հայտնվեցին նրա 16
տանկը և մի «Ֆերդինանտ» ինքնադնաց
հրանոթը: Մեր աջ թևն սկսեց ետ քաշվել:
Կարապետյանն ինձ հետ միասին դուրս
ցատկելով խրամատից, ատրճանակը ձեռին՝
«Իմ ետևից, հանուն Մելիտոպոլի», հանուն
սովետական Հայրենիքի» կանչելով, առաջ
ընկավ: Մարտիկները միահամուռ գրոհի
նետվեցին թշնամու վրա: Այդ պահը վճռեց
մարտի ելքը: Ոչ միայն ետ մշտեց հակառա-
կորդի հակագրոհը, այլև զրավեցին նրա
սպազտպանության առջեի եզրի խրամատ-
ները:

Այս մարտը կրիտիկական մոմենտներից
մեկն էր մեզ համար: Եթե մի քայլ ետ քոշ-
վեինք, ամեն ինչ կկորչեր: Բայց շնորհիվ
գնդապետի վճռական միջոցառումներին և
ցուցաբերած անձնական արիոթյան, մենք
հաղթեցինք»:

Նշանավոր է այսպես կոչված 95-րդ թա-
ղամասի համար մղված մարտը: Երեք օր
կատաղի, արյունահեղ մարտ էր մղվում

այդ թաղամասի համար։ Թաղամասը բաժանող փողոցի ձախ կռղմը մերոնց ձեռքին էր, աջը՝ գերմանացիների։ Թշնամին զգում էր, որ այդ թաղամասի կորուստով կվճռվի իր բախտը։ Դրա համար էլ օրհասական ճիկեր էր գործադրում։ Իսկ Կարապետյանը դիմում է մաների։ Նա գումարտակներից մեկով դուրս է գալիս թաղամասի ծայրամասը՝ գերմանացիների թիկունքը։ աղմուկ բարձրացնում այնտեղ։ Խուճապի մատնված գերմանացիներն սկսում են կրակել իրար վրա և փախուստի դիմել։ Մակայն փախուստի համար ևս ուշ էր արդեն։ Նրանք ընկել էին մերոնց «պարկի» մեջ։ Կարապետյանի ստորաբաժանումներն արդեն դուրս էին եկել Մելիտոպոլ քաղաքի հարավային ծայրամասը։ Դա հոկտեմբերի 22-ին էր, իսկ 23-ին թաղամասն արդեն ամբողջապես մաքրվել էր հակառակորդից։

Միրելի գնդապետի տեսությանը կտրուտած շտարային-յուրայինները մարտերի վերջին նրան գտան քաղաքի հարավային մասում լայն տեսադաշտ ունեցող միհարկա-

նի տներից մեկի ձեղնահարկութ սարքած իր նոր դիտակետում։ Այդ օրը միայն նա հանդիպեց նրանց հետ։

Գնդապետ Ռապովորաց այսպես է վերահիշում Կարապետյանին անձնատկես հանդիպելու այդ պահը։

«Առաջին հերթին ինձ հետաքրքրում էր գնդապետի առողջությունը։ Իմ ուղղակի հարցին նա սկասածիանեց յուրց, և իրեն հատուկ յումորսվ։

— Այստեղ հիանալի ընկերներ զոհվեցին Հանուն Հայրենիքի։ Իսկ ևս մի քիչ վատ էի զգում ինձ։ Ինչ կա վոր…»

Չնայած իր վերքերին ու փաստութեն հիվանդ վիճակին, մարտերի ամբողջ ընթացքում նա այդ մասին որևէ ակնարկ անգամ չէր արել»։

«Եթե թշնամին անձնատուր չի լինում, նըրան ոչնչացնում են», — ասել է ոռոսական մեծ գրող Մաքսիմ Գորկին։ Սովետական ուղմիկները լավ էին յուրացրել անմահ գրողի այդ խոսքերը։ Հայրենական մեծ պատերազմի Մելիտոպոլյան հերոսամար-

Առում նրանք իրականացրին այդ պատկամը:

Բավական է հիշատակել երկու թիվ։ Փողոցային ութնօրյա գոտեմարտերում միայն Կարապետյանի ստորաբաժանումները բնաջնջեցին գերմանական շուրչ հինգ հազար դինվոր և սպա, գերի վերցրին ընդամենը 17 դինվոր և սպա... Բացի այդ ոչնչացվեց թշնամու 42 տանկ, 12 հրանոթ, 1 ինքնակնաց հրանոթ, 1 զրահագնացք, 2 սկանեստ ուղմամթերքով, ավելի քան 20 տվտոմերենա, ավելի քան 60 ծանր ու թեթե զնդացիր և շատ այլ սպասազինություն ու ուղմական գույք։ Վերցվեց նաև մհծաբանակ ուղմական ավար։

Մելիտոպոլյան հակատամարտում ցուցաբերած արիության և խիզախության համար դիվիզիայի անձնուկազմն արժանացավ Գերագույն Գլխավոր Հրամանատար, Սովետական Միության Մարշալ բնկեր Ստալինի շնորհակալությանը, դիվիզիային շնորհվեց «Մելիտոպոլյան» անուն։ Հորյուրավոր մարտիկներ և հրամանատարներ արժանացան

կառավարական քարձու պարգևների - շքանշանների ու մեդալների։

Գերմանա - ֆաշիստական զավթիչների դեմ մղվող պայքարի ճակատում հրամանատարության մարտական սոռաջադրանքներն օրինակելիորեն կատարելու, ցուցաբերած արիության և հերոսության համար, ՍՍՌՄ Գերագույն Սովետի Նախագահության 1943 թվի նոյեմբերի 1-ի Հրամանագրով գնդապետ Ասքանազ Գևորգի Կարապետյանին շնորհվում է Սովետական Միության Հերոսի կոչում։ Սովետական Միության Հերոսի բարձր կոչմանն են արժանանում նաև գումարտակի հրամանատար կապիտան Նիկոլայ Եերգեկիչ Ալյոշինը, ավագ սերժանտ Պավել Անդրեսիչ Գոգարենը և հրանոթի հրամանատար սերժանտ Վասիլի Գավրիլովիչ Կրիկունը։

Կարմիրբանակային ստեղծագործող, Հետախույզ, ավագ սերժանտ Վ. Սորոկինը Մելիտոպոլի ճակատամարտի մասնակիցներին նվիրված իր բանաստեղծության մեջ

այսպես է գովերդում դիվիզիայի հերսոներին.

Զեր երախտիքը մեծ է, ընկերներ,
Հանդեպ մեր երկրի.

Առաջնորդն այսօր հրաման տվեց—
մեզ պատիշվ այնքան,

Մարտերում կովկած մեր դիվիզիայի
Անունը կոչել Մելիտոպոլյան:

Հերոսի կոչմանն են արժանացել
մեր մեծ Միտիքյան՝

Սիրելի Բատկոն—Կոմդիվը արի
Ել էլի երեք խիզախ ռազմիկներ՝

Ռոկեհուր աստղի փառքը նվաճած
ընկերները մեր

Օրերս կրկին հս շրջում էի
Մելիտոպոլում,

Ժիր մանուկների շինչ նրբն էր հնչում
Այնքան մեզ ծանոթ այդ փողոցներում,

Լսեցի ուրախ երդը պատանյաց—
Զեզ էր նվիրված:

Բուժվում են նրանց վերքերը բոլոր
Ու կրկին հորդում կյանքն օրեց-օրու

ԴԵՐՄԱՆԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ
ՃԵՂՔՈՒՄԸ ՊԵՐԵԿՈՊՈՒՄ

Եվ մինչ սովետական բովանդակ երկրով
մեկ թնդում էր Մհելիոպոլիսան ճակատա-
մաբարի պանծալի հերոսների համբավը, հայ
ժողովուրդը նոր ցնծությամբ էր լցվել հերոս-
ների փառապանծ կոհորտայում տեղ գրաված
իր արժանավոր զավակի համար, Ասքա-
նազն իր զորագնդերն առաջ էր մղում դեպի
Պերէկոպ՝ գերմանական պաշտպանության
աջդ հաջորդ կարևորագուցն բնադիմը: Մի-
այն Պերեկոպի գերմանական ամրություննե-
րի ճեղքմամբ կարելի էր իրականացնել
«գերմանացիների համար Ղրիմը նոր Ստա-
լինգրադ դարձնելու» ստալինյան առաջա-
դրանքը:

Պատասխանատու առաջադրանքը օկա-
չանչում էր լուրջ ու մանրակրկիտ նախա-
պատրաստություն: Գերմանական հրամա-
նատարությունը շատ բանով կատարելա-
գործել էր առանց այն էլ իրենից բնական
ամրություններ ներկայացնող պարանոցը:

Հիտլերականները սովետական զորքերից
պատճեշվում էին Պերեկոսլի հսկայական
փոսով, որն ուներ շորս շառք խոր խրա-
մատներ, ապա՝ Իշունի դիրքերով։ Աղի լճե-
րը, նեղ, միջլճային հովիտները, ուր ոչ ճա-
նապարհ կա, ոչ կածան, գերմանացիները
վերածել էին պաշտպանական հենակետերի՝
խոր էշելոնացված պաշտպանական կտու-
ցումներով։ Դա նրանց բնը դակարիսպին էր
Դրիմի երկրորդ մուտքին՝ Սիվաշի վրա։

Արևելքից և արևմուտքից 14 կիլոմետր
լայնությամբ հողի գոտին, որ սահմանագատ-
վում է ծովով, ամբողջ խորությամբ՝ Տու-
րեցկի վալից մինչև Իշունի դիրքերը, փոր-
վել էին խրամատներ, զոնդված ոնակշու-
թյան տները, վեր էին ածվել հենակետերի,
որոնք մեծապես հաղեցվել էին կրակային
միջոցներով։

Հինգ ամիս շարունակ հիտլերականները
ամրացնում էին Պերեկոսլի պարանոցը,
կատարելագործում պաշտպանական կա-
ռուցվածքները։ Նրանք վերականգնել էին
երկարատև հին կրտկակետերը, կառուցել

նոր ԴՕՏ-եր, ԴԶԵՏ-ներ, ստեղծել ականա-
դաշտեր: Բոլոր բնակավայրերը վեր էին ած-
վել ամրոցների՝ կրակացին միջոցների այն-
պիսի հագեցվածությամբ, որոնք կարող էին
մարտ մղել իրարից անջատ: Կրակակետերի
սիստեմը շեր թույլատրում մոտենալ նրան-
ցից որևէ մեկին, քանի որ նրանք փոխա-
դարձաբար իրար պաշտպանում էին կրա-
կով: Մեր հրետանավորները պաշտպանու-
թյան միայն առաջին գծում նշանահատել
էին հակառակորդի շուրջ 200 կրակետ:
Իսկ պարանոցում առաջին դեեր կային մի
քանի տեղ:

Դրոհի պատրաստվող մեր զորամատերը
հինգ ամիս շարունակ մարտական լարված
զործունեությամբ էին տարված: Մեր հետա-
խուզները, հրետանավորները, սակրավոր-
ները, դիտողները, հետեւակացինները կլան-
ված էին քրտնաշան առօրյացով: Թշնամու
ամրությունների բնույթը բացահայտելը,
նրա կրակակետերը հայտաբերելը, կրակա-
ցին սիստեմը պարզելը, հայտաբերված յու-
րաքանչյուր կրակակետի քարտ-բնութագի-

րը կազմելը — Հետաքրքիր ու վտանգներով
ի մարտական առօրյայի առանցքն էր:

Մեր Հետեակայինները նորից թիկունքում
անընդհատ վարժություններ էին կատարում
գերմանական պաշտպանությունը ներկա-
յացնող մակետ-վարժադաշտերում։ Գրոհիշ-
շրջափակող ջոկատները նորից ու նորից
էին ստուգում, կատարելագործում գլուխելու,
շրջափակելու իրենց հմտությունը։

Կարապետյանի Մելիտոպոլյան պանծա-
լի դիվիզիան 1944 թվի մարտին և ապրիլի
առաջին տասնօրյակի ընթացքում եռանգում
կերպով պլացդարմ էր նախապատրաստում
հակառակորդի պաշտպանությունը ճեղքելու
համար Արմյանսկ կայարանի և Շեմիլովկա-
յի հատվածում։ Պլացդարմի նախապատ-
րաստման մեջ էր մտնում ձակատային հա-
մատարած երկու խրամատների փորումը,
այդ խրամատներն ու Տուրեցկի Վալը միաց-
նող անցուղիների ցանցի ստեղծումը։ Միա-
ժամանակ փորվում են հակառակորդին մեր-
ձինալու 10 պունդ (յօն), որի հնատեանքով
դիվիզիայի ստորաբաժանումների և հա-

կառակորդի միջև եղած տարածությունը
հասնում էր 60—100 մետրի։ Փորվում է
նաև գնդացրային 80 հրապարակ, մինչև 70
հենակետ՝ հրետանու և տկանանետերի հա-
մար։ Կատարված վիթխարի աշխատանքի
մասին գաղափար տալու համար բավական
է ասել, որ փորվել էր 20 հազար խորա-
նարդ մետր հող։ Դրանով էր ասլահովվում
դիվիզիայի գրաված դիրքերի հակաօպային,
հակատանկային և հակահրետանային
պաշտպանությունը։

Կարապետյանն անձամբ հոգ էր տանում,
որպեսզի լրիվ պրոֆիլի հասցվեն փորված
խրամատներն ու մերձեցման պունդները,
ժանրակրկիտ կերպով քողարկվեն ասջեկ
եզրի կրակակետերը։ Այսպիսի նախաղպաւ-
շություն խիստ անհրաժեշտ էր մանավանդ
այն նկատառումով, որ հակառակորդը,
գտնվելով Տուրեցկի Վալի բարձր դիրքերում,
առավելություն ուներ դիտման մեջ և ան-
ընդհատ կործանիլ կրակի տակ էր պահում
մեր դիրքերը։

Մելիտոպոլյան դիվիզիայի հրամանա-

տարն օրն ի բուն Հրամանատարական դիւ-
տակետից հետևում էր թշնամու ամեն մի
շարժմանը և համապատասխան հակամի-
ջոցների դիմում նրա ակտիվությունը կու-
րելու համար:

Կարապետյանի հրամանատարական ա-
ռաջին դիտակետը Միվաշի ափին էր, զեր-
մանացիներից մի քանի հարյուր մետրի վրա:
Այդ նրանք հայտաբերեցին ու զարդեցին
Հրետանային արկով: Այդ ժամանակ նո իր
դիտակետը փոխադրեց դիվիզիայի դասա-
վորության շրջանի կենտրոնը՝ մի բլրի վրա:
Հստ երևույթին, այս ևս նկատեց թշնամին:
Դիտակետի վրա հիտլերականները բաց թո-
ղին 12 ռմբակոծիչ և ահավոր ռմբակոծու-
թյան ենթարկեցին այն: Մի քանի մարտա-
կան ընկերներ զոհվեցին, մի քանիսը վիրա-
վորվեցին, Կարապետյանը ծանր կոնտուզիա
ստացավ, այնպես որ նա կարողանում էր
միայն զրավոր կարգադրություններ անել...

Այս առթիվ կորպուսի հրամանատարը
հանգիստ է նշանակում դիվիզիայի հրա-
մանատարին: Սակայն նա երկրորդ օրն իսկ

նստած էր իր նոր դիտակետում - ջրաճընշաման նախկին աշտարակի վրա՝ հակառակորդից 400 մետր հեռավորությամբ։ Այստեղ ես նա երկար չկարողացավ մնալ։ Թշնամին նորից ավերեց դիտակետը։ Բայց անընկճելի էր Հերոսի կամքը։ Նոր դիտակետընտրեց ուղղակի Տուրեցկի վալում, թյուրքական նախկին բերդը՝ հակառակորդից 70—80 մետրի վրա։ Գերմանական հրետանին ալևս շէր կարող իւցել դիտակետը։ Սակայն ֆաշիստական սնայպերները կրակում էին ուղղակի դիտափողի մէջ։ Հարկ եղավ դիտակետը քիչ հեռացնել և քողարկել ավելի մանրակրկիտ։ Այս դիտակետից էլ դիվիզիայի հրամանատարը ղեկավարում էր իր զորագնդերի վերախմբավորումը վճռական գրոհի համար։

Արմյանսկ քաղաքն ու կայարանը իրենցից ներկայացնում էին մի կատարյալ ավերակույտ։ Ավերված տների մերկ պատերի ետևում, իրենց հենակետերում ծվարած հիտլերականները կրակային կատաղի մարտ էին մղում։ Այդ պատերի ետևում, հատկա-

պես կայարանի շրջանում էին քողարկված
պահվում դերմանական հրանոթները, ակա-
նանետերը, ինքնագնաց «Յերդինանտներն»
ու տանկերը:

Նախապատրաստման ամբողջ շրջանում
Կարապետյանն իր օդնականների հետ մշա-
կում էր գրոհի մանրակրկիտ ոլլանը: Նա
վճռել էր գլխավոր հարվածը հասցնել եր-
կաթդի երկարությամբ դեպի Արմյանսկ
կայարանը: Դա, ըստ նրա մտահղացման,
կապահովեր և՛ դիվիզիայի շրջանի ազատա-
գրումը, և՛ կնպաստեր հարեան դիվիզիայի՝
հակառակորդի պաշտպանությունը ճեղքելու
գործողություններին:

Գլխավոր հարվածը հասցնելու էր փախ-
պնդապետ Կասիմովի հրամանատարությամբ
գործող գունդը, որի հետ Կարապետյանն
անձամբ տակտիկական վարժություններ էր
անցկացնում թիկունքում՝ երկաթդի պաս-
տառի երկայնությամբ: Գրոհի նախօրյակին
գնդին ավելատրվեցին հրետանային նոր
միջոցներ:

Գերմանական դիրքերի հրետանային մը-

շակման մեջ ևս նախատեսվում էին նոր հնարներ: Ուժեղ հրետանային նախապատրաստությանը պետք էր հետևեր հետևակի կեղծ, ցուցադրական գրոհը, այնուհետև կրկնվող հրետանային կրակե ալիքի ետևից գրոհի ելնեին հետևակայինները:

Ապրիլի ոկտոբերին թվում էր, թե արդեն ամեն ինչ պատրաստ է վճռահան գրոհի համար: Բայց 1944 թվի գարսմով Պերեկոստում սկսվեց խիստ քմահաճ անձրևներով: Մառախուղ, ծյունախոռն հեթորիկներ, ցեխ, ճանապարհազրկություն: Ահա այս պայմաններում համարյա մեր մարտի 1ների ձեռների վրա, մեր զորքերի ելման դիրքերն էին բերվում ուղղմամթերք, տիխնիւա:

Սկսվեցին ապրիլյան առաջին պայծառօրերը: Քամին լոեց, դադարեցին անձրևները: Գետինն արագորեն չըրացավ. ձորակների հարավընկած լանջերին կասուցին էին տալիս դաշտային ծաղիկները. իսկ ուղմաղաշտում հրացանափնդաշրային սովորական փոխհրածգություն էր: Պայթում են և արկերը, թոշում են ինքնաթիռները: Դա հի-

շնուռամ է խաղաղ ծովը մեծ փոթորկից աւ-
ռաջ, իսկ ուղարկածաշում փոթորիկն
սկսվում է, երբ միայն տրվում է ազդանշա-
նը...

Եղ ազդանշանը տրվեց: Ապրիլի 8-ի ա-
ռավոտյան տասնյակ քառակուսի կիլոմետր
տարածության վրա, լստ գոտիների շարք-
շարք դասավորված սովետական հազարա-
փող հրետանին ահավոր դղրդոցով ազդա-
նշանեց գրոհի սկիզբը: Հրետանային հա-
մազարկից մի տասնյակ բուզե անց դեր-
մանական պաշտպանություն ուժը գիծը
ծածկվել էր ծխի սե ամսով, հիտերյան
հրոսակախմբերի սրտերը պատելով մտհ-
վան սարսափով:

Այս մասին արժե հիշատակել առաջին
իսկ մարտերում գերի վերցված գերմանա-
կան լեյտենանտ Լինտների պատմածը...

— «Ես բացականչեցի և մարդիկ նետ-
վեցին խրամատները, դեպի հրակնառները:
Խրամատները շուտով լցվեցին զինվորնե-
րով: Թուսական խրամատներում դեմքեր
երևացին: Նրանք շարժվել ուսեցին: Արկե-

ըս պայթում են հեռու առջևի գծի հտևում։
Կրակը փոխադրված է խորքը։ Մուսները
գրոհի են գնում, — մտածեցի ես... Մենք
գիտեինք, որ այդ գիշեր գերմանական Հրե-
տանային մի խմբավորում թաքուն համա-
կենտրոնացվել է։ Նո հայտնի չէ հակասա-
կորդին և չի տուժել Հրետանացին կբակից։
Հենց որ ոուսները դուրս գան, մարտկոց-
ները կխփեն, ամեն ինչ կխառնեն հողին։
Թնդաց առաջին հառազարկը, երկրորդը։
Խոսեցին այդ մարտկոցները։ Մուսները «ու-
ռա» են կանչում, բայց տարօրինակ է, ինչ
որ պատճառով տեղից չեն շարժվում։

Եվ հանկարծ, բոլորովին անսպասելի,
նորից հարվածեցին ոուսների արկերը գեր-
մանական խրամատները։ Կեղծ դրոհը խա-
բեց մեղ։ Այն, ինչ մհնք վերջ էինք համա-
րում, միայն ոկիզբն էր։ Հրետանային նման
նախապատրաստություն մենք դեռ չէինք
տեսել։ Առաջին խկ կեա ժամում բոլոր կա-
պերը կտրվել էին, Շիմնական կբակակետե-
րը՝ ավերված։ Զինվորներն սկսեցին փախ-
չել թիկունք»։

Այսպես սովետական հրետանու շշմեցու-
ցիշ ու խորտակիշ համազարկերին հաջորդեց
մեր պանծալի հետևակի գլուհը զերժանական
դիրքերի վրա, միաժամանակ մի քանի տե-
ղից:

Գնդապետ Կարապետյանի մարտիկները,
գեներալ-մայոր Յալիկովի զվարդիաննե-
րը, գեներալ-մայոր Կազարցևի հետևակա-
յինները, Մելիտոպոլի ազատարար ստա-
լինգրադինները, մի հարվածային բռունցք
կազմած, հարձակվում էին Արմյանսկ քա-
ղաքի վրա: Թշնամու գլխին բարձրացած սո-
վետական զորքի այդ երկութեւ բռունցքի
մեջ Կարապետյանի մելիտոպոլցինները գրա-
վեցին իրենց պատվավոր տեղը՝ ջախչա-
խիշ հարված հասցնելով Պերեկոպում դեր-
մանական պաշտպանության հիմնական հե-
նակետերից մեկին — Արմյանսկ կայսրա-
նին: Ապրիլի 9-ին Արմյանսկ կայսրանն
արդեն ազատագրված էր, իսկ ապրիլի 10-ի
երեկոյան ամբողջ Արմյանսկ քաղաքը մա-
քըրված էր հակառակորդից: Այդ ժամանակ
իր զորամասերի հարձակումը սրբնթացորեն

զարգացնող Կարապետյանը արդեն գտնվում
էր իշունի դիրքերում, կոնտակտի մեջ մըտ-
նելով 51-րդ բանակի զորամասերի հետ:
Այս առթիվ նա արժանանաւմ է այն ժամա-
նակ գեներալ-լեյտենանտ Զախարովի շնոր-
հակալությանը:

Արմյանսկ կայարանի վրա պլեավոր
հարվածի ուղղությամբ դործող առաջապահ
գնդի հրամանատար փոխպետապետ Մ. Կա-
սիմովը այսպէս է պատմում մօրսք: ման-
րամասները.

«Գրոհի հենց առաջին ժամերին մեր
մարտիկները ետ մշեցին գերմտնացիներին
նրանց առաջին գիրքերը: Սակայն զերմա-
նացիները հրետանացին ուժեղ պնդակու-
թյան տակ վերցրին կայարանի շրջանն ամ-
բողջ ճակատով և խորությամբ: Երկաթզծի
պաստառի ուղղությամբ մեր ճակատացին
հարձակումը հաջողություն չէր խոստանում:
Ես իմ դիտակետից այս ժամանակ գեկուցեցի
գնդապետին: Նա հրետանավորներին անմի-
ջապես հրամայեց աշտկցել ինձ կրակով և
մի շարք ցուցումներ տվեց: Նա ինձ հրա-

մայեց մի գումարտակով Արմյանսկ կայա-
րանը թևանցել աջից, մյուսով՝ ձախից, իսկ
երրորդ գումարտակը թուղնել է հնարունամ,
որպես թշնամու ուժերը կաշկանգող խումբ:

Կատարելով այդ հրամանը, մենք դուրս
եկանք Արմյանսկի հարավային ծայրամա-
սը: Սակայն հակառակորդը նոր հակագրոհ-
ներով ետ էր պահում մեր հարձակումը:
Այդ պահին խրամատային անցուղիներով
դալով, ինձ մոտ հայտնվում է զնդապետը,
ինքը—կոմդիվը: Չեմ կարող թաքցնել իմ
ուրախությունը, որ կրիտիկական այս սլա-
հին դիվիզիայի հրամանատարն ինձ հետ է:
Բացատրում եմ դրությունը: Նա իսկուն
կապվեց զնդի ձախ հարեանի հետ և փոխ-
դործողության կանչեց նրան և բարձունքը
դրավելու համար: Դերմանացիներին այդ
բարձունքից դեն շպրտելու համար սկսված
մարտը մեզ հնարավորություն տվեց գիշե-
րային գրոհով ճեղքելու հիտլերականների
սպաշտականական այդ բնագիծը ևս և առա-
վոտյան լուսաբացին դրավելու Ֆիլատովիա
գյուղը:

Պերեկոպի գերմանական ամբությունների
ճեղքումը և այնուհետև Սովետական Դրիմի
ազատագրման համար ծավալված ճակա-
տամարտը, Հայրենական մեծ պատերազմի
պատմության մեջ կմտնի որպես նրա ամե-
նափայլուն էջերից մեեր: Կարմիր Բանակի
դեներալները, սպանելու ու մարտիկները այս
ճակատամարտում տվին մարտական հա-
սունության մի նոր քննություն: Նրանք ցուց
տվին թշնամուն խորտակիչ Հարվածներ
հասցնելու, կայծակնային մանկրների, գոր-
ծողության արագության ու շեշտակիության
նմուշներ: Մեր զորամասերից ոմանք հար-
ձակվում էին դեպի Կերչի թերակղզին տա-
նող երկաթդի երկարությամբ, մյուսները՝
երկաթուղային գլխավոր մաղիստրալով—
Զանկո—Սիմֆերովով, երրորդները Կարկի-
նոսյան պարանոցի վրայով դեսանտ էին
իջնում Իշունի դիրքերի ետևում՝ դերմանա-
ցիների խոր թիկունքում, իսկ Կարապետյա-
նը իր ստորաբաժանումներից մի ուժեղաց-
ված առաջավոր շարժուն ջոկատ կազմած՝
շարունակում էր թշնամու սրբնիաց հետա-

պնդումը դիսի Բախչիսարայ - Սելվաստո-
պոլ: Նա առաջավոր ջոկատի պետ էր նշա-
նակել շարային գծով իր տեղակալ, հռակի
շքանշանակիր գնդապետ Ա. Յ. Վզովիլինին,
որի հետ անմիջական կազ էր սպահանում
ռադիոյով, գտնվելով առաջին ջոկատի և
գնդերի արանքում: Առաջավոր ջոկատի
շարժման սրբնթացության մասին վկայում է
հետևյալ փաստը: Նահանջող թշնամուն
կրնկակոխ հետապնդելու առաջին օրը, առ-
բիլի 14-ին, ջոկատը կատարեց 73 կիլո-
մետր երթ, իսկ երկրորդ օրը, ապրիլի 15-ին՝
84 կիլոմետր:

Հուզիչ էր Կարապետյանի մարտիկների
հանդիպումը Ղրիմի պարտիզանների հա-
րավային միավորման ջոկատների հետ
Բախչիսարայի շրջանում:

Ապրիլի 11-ին Մոսկվան ողջունում է
Պերեկոպի գերմանական ամրավյունները
ճեղքող սովետական զորքերին: Հարձակման
4-րդ օրն արդեն ազատագրված էր Ղրիմի
մայրաքաղաք Սիմֆերոպոլը, Զանկովը և
շատ այլ բնակավայրեր: Դրանից մի ամիս

շանցած՝ մայիսի 9-ին, Մոսկվան կրկին պաշտուեց Ռուսական 4-րդ ռազմաճակատի գործերին, ուստական վառքի քաղաք Սեվաստոպոլի ազտտագրման առթիվ:

Գերագույն Գլխավոր Հրամանատար, Մովետական Միոթյան Գեներալիսսիմուս բնկեր Ստալինի այդ առթիվ տված հրամանում ասված է.

«Ռուսական 4-րդ ռազմաճակատի գործերը, հրետանու և ավետիայի համախմբված հարվածների աջակցությունը, հռօրյա հարձակողական մարտելի հետքանրով ճեղքեցին գերմանացիների ուժեղ ամրացված երկարատև պաշտպանությունը, որ բաղկացած էր երկաթբետոնե պաշտպանական կառուցվածքների երեք գոտուց և մի քանի ժամ սրանից առաջ գրոհով տիրեցին Սևվաստոպոլ քաղաքին, կարեսլաղույն ռազմածովային բաղադրին և բերդին Սև ծովում։

Դրանով իսկ լիկվիդացվեց գերմանացիների պաշտպանությունը վերջին օջախը՝ Պրի-

մում և Ղրիմն ամբողջապես մաքրվեց գեր-

մանա-ֆաշիստական զավթիչներից»:

Ուկրաինական Հ.րդ ռազմաճակատի փառապանծ զորքերի շարքումն էր մարտընչում նաև գնդապետ Ասքանադ Կարապետյանի Մելիտոպոլյան դիվիզիան:

Մինչ Սեվաստոպոլի պատմական ճակատամարտը, Կարապետյանն արյունալի մարտեր էր մղում գերմանացիների դիմադրությունը կոտրելու համար Բելբեկի գետի բնագծում: Ընկճելով թշնամու դիմադրությունը Բելբեկի հովտում, նա հիտյերականներին հետապնդում է մինչև Հյուսիսային ծովախորշը: Նա առաջիններից առաջինն էր ծովափի հասնողների մեջ, նա անհապաղ որոշում է բռնանցել ծովախորշը: Նրա որոշումը հաստատում է բանակի հրամանասարր: Եվ ահա թշնամական կատերների ու բարժանների, ինչպես նաև առափնյա հրետանու գնդակոծության տակ, Կարապետյանն անձամբ կազմակերպում ու զեկավարում է իր ստորաբաժանումների անցումը ծովախորշով դեպի Սեվաստոպոլ քաղաքի կինարոնը: Դա

վճռական ու համարձակ քայլ էր, որին նա
դիմում՝ էր ամենայն հաստատեկամու-
թյամբ:

Հրետանային հակամարտկոցային մար-
տով նա կաշկանդել էր թշնամու կրակային
ուժերը և եռանդուն կերպով իրականացրեց
իր մտահղացումը: Այսօքան, մինչ առկա մի-
ջոցներով մակույկների ու բարժաների վրա
մեր հետևակայինները կտրում-անցնում էին
Հյուսիսային ծովախորշը, ծովափիին կանդ-
նած հրետանին իր կրակով աջակցում էր
նրանց անցմանը, ոչնչացնելով նաև թշնա-
մու 8 կատեր և 3 բարժան:

Մայիսի 9-ի երեկոյան սիվիզիւյի առա-
ջավոր ջոկատը և մի գոնդ արշեն անցել
էին ծովախորշը, մտել Սևաստոպոլ: Թշնա-
մին սկսեց խստորեն զնդակուծիք: Մի ժամ
շարունակ դեսանտայինները պառկել էին
սևաստոպոլյան հայտնի սանդուխների վրա,
իսկ գլուխով սկսված գրահավ գուրս եկան
Ստրելեցկայա ծովախորշը: Այս համարձակ
գործողությունն էլ խուճապ առաջ բերեց

գերմանացիների մեջ և նպաստեց Ակաստո-
պոլ քաղաքի արագ մաքրմանը թշնամուց:

Շքանշանակիր ավագ Դրիգորի Արքի-
մենկոն սրտի կծկումով է հիշում այդ օրե-
րին Բատկոյի հերոսական վարքը:

«Նա մեր բոլորի պաշտելին է, մեր բո-
լորի սիրելի Բատկոն—Հայրը: Մինչևօրս էլ
սիրտս կծկում է, երբ հիշում եմ, թե ինչ-
պիսի ոխոկով նու զնկովարում էր մեր ան-
ցումը Հյուսիսային ծովախորշով: Թշնամու
արկերն ուղղակի պայմանմ էին նրա կող-
քին, թոշում մեր գլխի վրայով: Բայց Բատ-
կոն վախն ինչ է, չգիտե: Նա կարծես ծնվել
է կովելու և հաղթելու համար: Մարտից
դուրս նրա համար ձանձրալի է»:

Շուտով, 1944 թվի մայիսի 16-ին, Սո-
վետական կառավարությունը նորից նշեց
Ասքանազի քաջությունն ու մարտավարման
հմտությունը, նրան պարգևատրելով Սու-
վորովի 2-րդ աստիճանի շքանշանով: Իսկ
Մելիտոպոլյան նրա դիվիզիան զերմանա-
ֆաշիստական զավթիչների գեմ մովսդ սլայ-
քարի հակատում հրամանաւորության

մարտական առաջադրանքներն օրինակելիութեն կատարելու, անձնակազմի ցուցաբերածքաջության համար, արժանացալ Կարմիր Դրոշի շքանշանի։ Նորից հարցուրավոր մարտիկներ ու սպաներ արժանացան Սովորական Միության մարտական շքանշանների ու մեղալների։

Այդ նրանք էին, որ Ղրիմի ազատագրման համար մղված մարտերում անվախ գրոհում էին թշնամու դիրքերը, ընկճում նրա գիմադրությունը, ոչնչացնում նրա կենդանի ուժն ու տեխնիկան։ Այդ նրանք էին, որոնց մարտական հաշվում գրիշած է գերմանական մոտ յոթ հազար ոշնչացված գինվեր և սպա, ըստորում և մի գեներալ։ Այդ նրանք էին, որ գերեցին մոտ հազար երեք հարյուր հիւլերյան զինվոր և սպա, բնաջնշեցին մոտ 30 ԴՊՏ ու ԴՊՕՏ, 28 բլինդաժ, մոտ 100 հաստոցավոր ու ձեռքի գնդայիլ, 2300 հրացան, 275 ավտոմատ, զանազան տրամաշափի 24 հրանոթ և ականանետ, 124 ավտոմեքենա, 6 քարշիլ, 8 կատեր, 3 բարժա, 180 սալլ,

18 պահեստ ուղղամթիրքով, ոլարենամթիրքով ու գույքով:

Այդ նրանք էին, որ իրենց Հերոս զնդապետի գլխավորությամբ, սովետական մռւս զորքերի հետ միասին, պատվով էաւտարեցին ստալինյան առաջադրանքը - «Դրիմը երկրորդ Ստալինդրավ» դարձնելով գերմանացիների համար։ Այդ նրանք էին, որ սևաստոպոլյան հերոսամարտում տարած հաղթանակով ամառ հիմք դրին կարմիր Բանակի հետագա հաղթական առաջխաղացման համար, մինչև գերմանական գաղանի որչը, մինչև հիտլերյան խավարամոլության օրրանը՝ Բեռլին։

Այսպես կատարեց սովհատական քաղաքացու և զինվորի իր պարորը Հայրենիքի հանդեպ Սովհատական Միության Հերոս, գնդապետ Ասքանազ Գևորգի Կարապետյանը, իր լուման մուծելով մեր մեծ հաղթանակի գործին։

ՍՍՌՄ ժողկոմսովետը իր՝ 1944 թվի նույնամբերի 2-ի որոշմամբ Կարապետյանին շնորհեց գեներալ-մայորի զինվորական կո-

Հում: 1944 թվի նոյեմբերի 3-ին Կարմիր
Բանակում երկարամյա ծառայության հա-
մար ՍՍՌՄ Գերագույն Սովետի Նախադա-
հության Հրամանագրով պարզեատրվել է
Կարմիր Դրոշի երկրորդ շքանշանով, իսկ
1945 թվի փետրվարին, Կարմիր Բանակում
25-ամյա անբասիր ծառայության համար՝
Լենինի երկրորդ շքանշանով:

* * *

Այժմ Հաղթական Կարմիր Բանակի զո-
րամասերում եռանդան աշխատանք է ծա-
վալվում երիտասարդ, նորեկ կարմիր շանա-
կայիններին ուսուցանելու ուղղությամբ Հայ-
րենական մեծ պատերազմի հարուստ փոր-
ձի հիման վրա:

Գեներալ-մայոր Կարապետյանը դեռ
մարտերի ամենառուն շրջանում՝ հմտորեն
զուգակցում էր ստորադրյալների մարտա-
կան ուսուցումը մարտական ռդրակտիկայի
հետ: Դրանով էր հաճախ նաև համարմ լուրջ
հաջողությունների:

Կարմիրբանակութինների և ստորադրյալ

սպաների հետ անձամբ անցկացրած տառաւ-
կան ու գործնական պարապմունքներից բաւ-
ցի, դեռ մարտերի շրջանում նա հոգվածնե-
րով հանդես է եկել կարմիրլուսակային մա-
մուլում՝ հրամանատուրի իր գիտելիքներն ու
կենսափորձը հաղորդելով նրանց։

Արժե հիշատակել նրա նշանավոր երկու
հոգվածները, որոնք հրապարակվել են կար-
միրբանակային «Ալուլինեց» թերթում։ Թեր-
թը «Խորհուրդներ մարտիկին» բնդհանուք
խորագրի տակ է տեղավորել նրա աւագին
հոգվածը, որ կրում է «Սովորիր գերմանա-
ցիներին խփել խրամատում» վերնազիրը։ Մյուս
հոգվածը կրում է «Մարտիկի պորձո-
զությունը հանդիպակաց մարտում» վերնա-
գիրը։ Այս հոգվածներն այնքան են ուսա-
նելի, որ առանց շափաղանցության կարելի
է օդտագործել որպես հանձնարարական
գրականություն՝ ռազմագիտություն բաղկա-
նասիրողների, հատկապես Հայրենական

պատերազմի փորձն ուսումնասիրողների
համար¹:

Այսօր դարձյալ նույնպիսի ևսանդով գեշ
ներալն ուսուցանում է իր մարտիկներին ու
սպաներին: Նա հաճախ է կրկնում սուվորո-
վյան հայտնի աֆորիզմը, որ ուսուցման մեջ
քրտնելը հաղթանակի նախապայմանն է
մարտում: Նա աններող ու խստավահանջ է
դինվորական կարգապահությունը խախտող-
ների նկատմամբ, բայց միաժամանակ զգա-
յուն ու հոգատար՝ իր ոտորադրյալների կա-
րիքների նկատմամբ:

Անցեք անտառի փեշով մեկ տամ հովտի
տափարակում դասավորված նրա ստորա-
բաժանումների ճամբարը: Զեր սուած բայ-
վում են ամենաօրինակելի այգի հիշեցնող
ծառուղիները, սալաբեկոծ կարմիր կղմինդրի
խճաքաբով կամ տվագով: Բլինդաժամնակ-
ներում, ճաշարանում, ակումբում, բնթերցա-
րանում, ամբողջ ճամբարում տիրող կարգ

¹ Կարապետյանի այդ հողվածները տես հավել-
վածում:

ու կանոնը, մարդությունը, կարող ին զար-
մացնել անգամ ամնաբժախնդիր այցե-
լուին:

Մարտական պայմաններին մոտեցված
տակտիկական վարժություններում Կարապե-
տյանի դիվիզիան միշտ առաջավորների
շարքումն է իր ուսուցչածությամբ։ Նորեկ
մարտիկները գիտեն, որ իրենք Մելիտոպո-
լյան Կարմրագրոշ դիվիզիայի շարքերումն
են և չի կարելի արատավորել արյունալի
մարտերում նվազված նրա անարատ փառ-
քը...

Համաբանականին առկտիկական վար-
ժություններից մեկի ժամանակ՝ հանդիպա-
կաց մարտ մղելով «Հակառակորդի» զերա-
կշիռ ուժերի դեմ, Կարապետյանը ընդունեց
խիստ համորձակ սրոշում։

Նրա մտահղացմամբ հարձակման հա-
մար համախմբված երկու գնդերը արցանի
մեջ էին վերցնելու «Հակառակորդին», տա-
տիճանաբար նրան ոհղմեին ծովին, ու
շախչախեին նրա ուժերը։ Եվ քանի որ նա
ընդունել էր այս որոշումը, աղա ամբողջ

Հաւտատակամությունն ի զործ դրեց և իրականացրեց այն։

Տողերիս հեղինակը, որպես զինվորական թղթակից, ներկա էր ուսումա-տակակական այդ վարժությունների արդյունքների քըն-նարկմանն ու ամփոփմանը նվիրված սպա-լական խորհրդակցությանը։ Բանակի հրամանատար գեներալները, շտաբային բարձրաստիճան սպաները գովասանքով էին հիշատակում ոչ միայն Սովորական Միության Հերոս գեներալ-մայոր Ասքանազ Կարապետյանի անունը՝ համարձակ, ճիշտ մտահը-ղացման և դրա հաստատակամ իրականաց-ման համար, այլև նրա մարտիկներին ու սպաներին՝ օրինակելի զործողությունների համար։

Շարքային կարմիրբանակայինից մինչեւ գեներալ-մայոր, դաշնակների տիրապետության օրոք կորստյան մտանված մարդուց մինչև մեր օրերում Սովհատական Միության մարտական վեց շքանշանով ու երեք մեղալ-ներով պարզեատրված Սովհատական Միության Հերոս, — այդպիսին է առա Մելիտո-

պոլյան Կարմրադրոշ դիւլիզիայի հրամանատար Ասքանազ Կարապետյանի ուղին:

Դեռ Հայրենական մեծ պատերազմի ըստիցին Ասքանազի մարտական ընկերները հետևյալ նամակն էն ուղարկել նրա կնոջը՝ Երա Ալեքսանդրի Կարապետյանին.

«Հարգելի Երա Ալեքսանդրովնա.

617-րդ հրաձկային զնդի հրամանատարությունը խոր բնիքանքի զդացումով է շնորհավորում Զեզ՝ նոր տարգա առթիվ:

Զեր ամուսինը, զնդի հրամանատար, շքանշանակիր մայոր Ասքանազ Գևորգի Կարապետյանը անսահմանորեն նվիրված է կենինի-Ստալինի գործին: Նա անողոք կերպով ջախջախում է ֆաշիստական դավթիշներին: Զեր ամուսնու հմուտ հրամանատարության շնորհիվ նրան վստահված գունդը անթառամ փառքով պատճեց իրեն ողցիալիստական Հայրենիքի համար մղյած մարտերում:

Հպարտացեք Զեր ամուսնով, ինչպես մենք ենք հպարտանում նրանով»:

Ասքանազի մարտական ընկերների այս

զերմ խոսքերն իր ժամանակին ողևորության
և տոկունության ուժի տղբյուր են ծառա-
յել նրա երացի համար։ Այդ խոսքերն
այսօր էլ հնչում են նույն ջերմությամբ ու
ճշմարտացիությամբ, հպարտության պա-
ցումով համակելով մեր որակելը։

Ասքանազով իրավամբ հպարտանում է
ամբողջ հայ ժողովուրդուն։

1944—45 թ.թ
Գրիմ-Բրեսլավի

ԽՈՐՀԱՔԻՐԴՆԵՐ ՄԸՐՏԻԿԻՆ

ՍՈՎՈՐԻՐ ԽՓԵԼ ԳԵՐՄԱՆԱՅՈՒՆ
ԽՐԱՄԱՏՆԵՐՈՒՄ

Նիկոպոլի պլացդարձում և Դնեպրի աջ
ափում մղված մարտերը ցույց տվին,
որ վերջին ժամանակներս գերմանացիները
լայնորեն կիրառում են խրամատային
պաշտպանության սիստեմը:

Ի՞նչ է ներկայացնում իրենից պաշտ-
պանության այդ սիստեմը: Յուրաքանչյուր
զինվոր այդ պետք է գիտենա և հմտորեն
հաղթահարի այն խոշընդուները, որ հա-
կառակորդն ստեղծում է մեր ճանապար-
հին:

ԴՕՏ-երից ու ԴԶՈՏ-ներից բաղկացած
Հենակետերի և դիմադրության հանգույց-

ների փոխարեն՝ գերմանացիները այժմ փուրում են իրարից 150—300 մետր հեռավորությամբ 2—3 խրամատ։ Նեղ ու խորը (մինչև 2 մետր խորությամբ) զիգզագաձև այդ խրամատները ձգվում են մի քանի կիլոմետր ճակատով և հաղեցված են մեծաքանակ կրակային միջոցներով։ Խրամատների պատերի մեջ բջիջներ են փորվում, սարքվում են գնդացրային հրապարակներ, խորշեր՝ հրետանային և ականանետային կրակից պաշտպանվելու համար։ Խրամատների առջևից, 25—50 մետր հեռավորությամբ, անցնում է լարափակոցը, որի վրա սովորաբար կախված են «սյուրպրիզներ»—տոլ, նոնակներ, ականներ, ազդանշանի հարմարանքներ։ Լարափակոցի և խրամատների միջև ընկած է համատարած ականադաշտը։

Զինվորից հմտություն է պահանջվում հաղթահարելու այդ խոշընդուռները, ներխուժելու խրամատ և այստեղ ոչնչացնելու թշնամուն նոնակով, ավտոմատի, հրացանի կրակով, սվինով, խզակոթով, թիակով։

Գրոհի նետվելու համար, նախ և առաջ,
պետք է ավելի մոտենալ հակառակորդի
խրամատներին։ Դրա համար՝ օգտվիր մեր
Հրետանու կրակից։ Համարձակ առաջ շարժ-
վիր կրակային պատճեղի ետևից, մի վա-
խենա սեփական արկերի պայթյուններից,
կնա նրանց ետևից 200—250 մետր հեռա-
վորությամբ։

Միունի մոտ մղված մարտերում ընկ.
ընկ. Երեմենկոյի և Միասնիշենկոյի ստո-
րաբաժանումները, գնալով կրակային պատ-
ճեղի ետևից, հմտորեն օգտագործելով տե-
ղանքը, համարյա առանց կորուստների մո-
տեցան գերմանացիների խրամատներին։

Հակառակորդի խրամատներին մոտենա-
լիս՝ ինքո նույնպես մի հորանջիր։ Կրակ
վարիր գնդացրից, ավտոմատից, գերմանա-
ցուն թույլ մի տա գլուխը բարձրացնելու
խրամատից։ Գրոհի ես գնում—փամփուշտ
մի խնայիր, բայց և անտեղի մի ծախսիր,
հիշիր, որ քեզ փամփուշտը պետք է գալու
ինչպես խրամատում, նույնպես և հակա-

ուակորդի պաշտպանության խորքում մղվեւիք մարտի համար:

Հենց որ ճանապարհիդ վրա կհանդիպես լարափակոցի, գործի դիր մկրատը, երկարացված լիցքը, անցուղի բաց և շարունակիր արագորեն առաջ շարժվել: Եթե մոտդ մկրատ չկա, որպես ծածկոց շինելդ դցիր փշալարի վրա, ոչ մի բանի առաջ կանգ մի առնի: Դանդաղկոտությունը մահ է:

Մոտեցար խրամատին — ընթացքից թշուիր նրա մեջ, այստեղ նայիր չորս կողմղ, գործիր արագ, կանխիր գերմանացուն երակով, հարվածով:

Մի նստիր մի տեղում: Առաջ և առաջ՝ Խրամատի ծովածքում սեղմվիր պատին, նոնակը նետիր ծովածքի այն կողմը, կամ նախօրոք քեզ համար ճանապարհ հարթիր ավտոմատի հերթակրակով (գնդացրի, հրացանի կրակով) և վաղիր դենը:

Խրամատով մենակ մի վաղիր, այլ երկուսով: Դու առաջ կնայես, իսկ ընկերդ՝ աջ և ձախ, կօգնեք մեկդ մյուսիդ:

Միուսի տակ մղված մարտերում ընկեր

Շշեգոլովի երկու մարտիկները ցատկեցին հակառակորդի խրամատի մեջ. նրանց վրա հարձակվեցին վեց գերմանացի: Հանուգուգն ուազմիկները մարտի բռնվեցին: Գործի ղը-նելով նոնակները, սվինը և խղակոթը, նը-րանք հաղթանակ տարան: Այստեղ հանդիս եկավ հնարամտությունը, բարձր վարժվա-ծությունը, ընկերական փոխօգնությունը: Ընկերոջն աջակցելը զինվորի սրբազան պարտքն է:

Եթե հակառակորդը հակագրոհում է -- մի շփոթվիր: Ավելի մոտ թող նրան և նըռ-նակներ շպրտիր նրա վրա, կրակ ուարիր սեփական զենքից:

Ուշադիր առաջ նայիր, անտեղի նոնակ մի նետիր, կարող ես յուրայինների վրա դցել:

Խրամատով վաղելիս՝ ոռդատկա կամ փշալարի կույտ տեսար, զգուշ եղիր: Եթե արգելքները չեն ականապատված, դեն նե-տիր հողաթմբից վերև: Խրամատում ակա-նապատված տեղերը մաքրիր նոնակով: Նոնակ նետելիս գնա խրամատի ծովածքի:

մյուս կողմը։ Խրամատի մաքրումը կատարիր այսպես՝ մեկն աշխատում է, մյուսը՝ նրան աջակցում կրակով։

Ճանապարհիդ ԴԶՕՏ-ի հանդիպեցիր, թևանցումով մոտեցիր հրակնատին և նոնակնետիր նրա վրա։

Համարձակ առաջ գնա, դու մենակ չես, քո ետևից ընկերներդ են, նրանք միշտ կաշակցեն։

Առաջ ես գնում — մի հապաղիր առաջին խրամատում, առաջ շարժվիր, մաքրիր երկրորդ խրամատը։ Քո ետևից հկող ընկերները ամբողջովին կմաքրեն խրամատը գերմանացիներից։

Սովորիր դիպով և հեռու նետել նոնակը, խրամատի անկյունից կրակել աջ և ձախ ձեռքով։ Արագ նայիր խրամատից վերև, լարիր լսողությունդ, որոշիր, թե ո՞ւր է թշնամին։ Մշտապես կապ պահպանիր ընկերներիդ հետ, զոկի հրամանատարի հետ։

Արագ և համարձակ գործելու, սեփական գենքը հմտորեն օգտագործելու դեպքում՝

միշտ կարող ես կանխել գերմանացուն և
առաջինը հարված հասցնել նրան:

Ա. ԿԱՐՍՊԵՏՅԱՆ

(Հողվածը լույս է տեսել Մելիտոպոլյան
կարմրադրոշ դիվիզիայի կարմիրբանակային
«Մտալինեց» թերթի 1944 թվի ապրիլի 3-ի
№ 47-ում):

ՄԱՐՏԻԿԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆԵՐԸ ՀԱՆԴԻՊԱԿԱՅ ՄԱՐՏՈՒՄ

Հանդիպակաց մարտը բնորոշվում է ի-
րադրության կտրուկ և արագ փոփոխու-
թյուններով և երկու կողմերի նախաձեռնու-
թյունը խլելու ձգտմամբ։ Հանդիպակաց
մարտում ճշգրիտ կերպով պարզ չէ, թե
ի՞նչպիսին են հակառակորդի ուժերը, նրա
կրակային միջոցները, ո՞ւր են դիտակետե-
րը։ Հանդիպակաց մարտի հաջողությունը
կախված է ուժերի ծավալման արագությու-
նից, կրակի և գրոհի հանկարծակիությու-
նից։

Հակառակորդին մոտենալու ժամանակաշրջանում հետախուզվը, նախաձեռնություն և հնարամտություն ցուցաբերելով, պարտավոր է ուշադիր դիտել տեղանքի բոլոր ծալքերը, բաց շթողնել ոչ մի տեղ, ուր կարող է թաքնվել հակառակորդը:

Հենց որ հայտաբերեցիր հակառակորդին և իմացար, թե ի՞նչ է անում, անհապաղ զեկուցիր հրամանատարին: Քեզանից շատ բանով է կախված մարտի հաջողությունը: Հիշիր, որ հետախուզությունը բանակի աշքն ու ականջն է:

Դետքային մարտիկներն ու դիտողները մեր ստորաբաժանումները նախազգուշացնում են հանկարծակի հարձակումից:

Դետքայինները, մեկը մյուսի ետևից շարժվելով՝ ցերեկը մինչև 600 մետր և գիշերը մինչև 100 մետր հեռավորությամբ, գիշերը պարտավոր են մանրակրկիտ դիտում վարել իրենց առջևում, աջ ու ձախ, կապ պահպանել հարեանի հետ և հմտորեն օգտվել ազդանշաններով: Եթե հակառակորդին հայտաբերեցիր, անմիջապես զեկուցիր

Հրամանատարին, որն ուղարկել է քեզ: Ինքը օգտագործիր զենքդ, աջակցելով սեփական ստորաբաժանման բացազատմանը և նպաստավոր դիրքեր գրավելուն:

Դիտողը, դիտման հատված ստանալով, դիտում և միտքն է պահում տեղական առարկաները, աշքի ընկնող օրիենտիրները: Նա պարտավոր է ուշադիր դիտել տեղանքի յուրաքանչյուր ծալքը, ուր հայտաբերված է հակառակորդը և նրա շարժումների, կրակային միջոցների մասին զեկուցել իր հրամանատարին: Գիշեր ժամանակ դիտողը պետք է դասավորվի ցածրավայրերում, որպեսզի դիտվող առարկաները տեսնի երկնքի ֆոնի վրա:

Տանկերի կործանիչները, գործադրելով իրենց զենքը, թշնամու տանկերը չեն թողնում դեպի հետեակի դասավորությունը: Շարժվելով հակառակորդի տանկերի հանդես գալու հավանական ուղղությամբ, նըրանք պետք է արագորեն ընտրեն կրակային դիրքեր և մոտիկ տարածությունից խըփեն թշնամու տանկերը: Տանկերը ետ մը-

ղելու ժամանակ հատկապես կարևոր է կործանիչների փոխգործողությունը իրար հետ:

Տանկերի հանկարծակի երևումից թևերը պաշտպանելու համար ականապատողները դնում են հակատանկային ականներ: Գործիր արագ, լավ քողարկիր ականները: Հանդիպակաց մարտում մի բոպեն կարող է վճռել մարտի ելքը:

Հրածիգների զենքը պետք է աշխատի անխափան: Բացազատման ժամանակ մարտիկները պարտավոր են սրընթաց գըրավել իրենց տեղերը մարտաշարքերում: Յուրաքանչյուր մարտիկ պետք է իմանա, որ հրամանատարների հրամանների հստակ կատարումը կապահովի հաղթանակը: Գրավեցեք նպաստավոր դիրքեր— բարձունքներ, ճանապարհներին եղած հարմար տեղեր, դուղձեր, ձագարներ, որոնցից լավ դիտվում է մոտակա վայրը:

Մարտիկի սրբազան պարտքն է— կատարել տեղանքի անձնական հետախուզություն: Նախքան նոր բնագիծ գնալը,

գնահատիր տեղանքը, ընտրիր մերձեցման
թաքուն ուղիներ: Օգնիր ընկերներիդ, հըմ-
տորեն զուգակցիր կրակը շարժմանը:

Այն դեպքում, երբ հակառակորդը կը-
փորձի թևանցել, գնդացրորդներն ու ավտո-
մատավորները իրենց կրակով պետք է փա-
կեն թշնամու ճանապարհը:

Համախմբման ժամանակ մարտիկն իր
համար դիրք է ընտրում ու նախապատրաս-
տում այն հաշվով, որպեսզի հակառակորդը
չխոցի նրան և նա կարողանա օգտագործել
իր զենքի կրակը:

Գրոհի ազդանշանը տրվելուն պես—
լցրու զենքը, նախապատրաստիր նոնակնե-
րը: Այնուհետև արագորեն շարժվիր տեղի-
ցը և անկանդ առաջ գնա, կրակ վարիր
ընթացքից: Հակառակորդին շհասած 50
մետրից՝ նհտիր նոնակները, ճանապարհ
հարթիր քեզ համար և թշնամուն վերցրու
սվինի: Այս գոտեմարտում, որ վճռում է
մարտի ելքը, հմտորեն ու համարձակ օգ-
տագործիր սվինը, խզակոթը, թիակը:

Առաջիկա մանկրներում գործիր այնպես,

ինչպես մարտում։ Ոչ մի պայմանականություն։ Ամեն ինչ պետք է լինի այնպես, ինչպես պատերազմում։

Այս ուսումնական օրերին յուրաքանչյուր մարտիկ բռնելու է բարձր վարժվածության և ժամանակակից մարտի ուղղմական վարպետության մարտական քննություն։

Ա. ԿԵՐՍՊԵՏՅԱՆ

(Հոդվածը լույս է տեսել Մելիտոպոլյան Կարմրադրոշ դիվիզիայի կարմիրքանակային «Ստալինեց» քերքի 1944 թվի սեպտեմբերի 9-ի № 125-ում):



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Եջ

1. ԱՀԵՂ վտանգի օրերին	26
2. Ստալինգրադի պաշտպանության դիրքերում	<u>52</u>
3. Դոնբասի համար մղված ճակա- տամարտում	76
4. Մելիտոպոլյան ճակատամարտը .	93
5. Գերմանական պաշտպանության ճեղքումը Պերեկոպում	119
6. Հավելված	148

Վֆ. 11356 Գատվեր 624. Հբառ. 316. տիրաժ 3000

ՀՍՍՌ Գիտ. Ակադեմիայի տպ., Երևան, Աբովյան 104

ԳԱԱ Հիմնարար Գիլ. Գրադ.



FL0043389

804

ԳԻՒՅ 3 Ա.

91
A 7000